


„Droschak“

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.



Adresse:

REDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԵԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Մ Ա Յ Ի Ա Ն Պ Ա Ց Ի Ժ

Համիրի պատասխանատու Կ. Կոմիտէի վճռով՝

Մարտ 31-ին, X քաղաքի մէջ „Աղբիւր-Աւար“ խմբի տէր օրիստների միջոցով մահւան պատժի ենթարկեցաւ Խալաթ գաւառի Ուրտափ գիւղացի ՍՕՂՍ ՄԵԼՔՕՆ-ՔԷՕՍԷԻԱՆԸ, որի մատնութեամբ սպաննւած էր Սերորի հօրեղբորորդի Յակոբ Ճարտարը և „Դաշնակցութեան“ հրացանները կառավարութեան յանձնւած: Տէնօրիստները ազատ են:

Յ Ե Յ Ե Ր

Ճգնաժամը յարատեւում է իր սարսափեցնող միակերպութեամբ: Մանր ու խոշոր դատաստները՝ հայրենիքի ամբողջ տարածութեան վրայ քայլ քայլ իրագործում են նախամտածւած, գիւտին ծրագիրը: Տեղեկագիրներ՝ մինը միւսից ծանր, սիրտ կտրատող՝ անընդհատ գալիս են մեզ տառապանքի աշխարհից: Կարգանք, չձանձրանալը կարդալուց: Ի՞նչ տայ յեղափոխական օրգանը, երբ իրականութիւնը մի նշանակեց անգամ չի բարեփոխուում, երբ սրի անուղք հարւածները և զոհերի ցաւագին բառաչները միակ հրատապ այգ-մեութիւնն են կազմում:

Մի տեղ անպաշտպան ռայեային կտոր-կտոր են անում ու գիւղը շամենավայրագ պրօֆանացիայի ենթարկում, մի այլ տեղ քերդ լամուկը՝ սովոր անպատիժ սերագործութիւնների՝ հայ աղջկան է դուրս քաշում անկողնից, մի այլ տեղ սուրբերի ենթակայ պարիան ծեծի և անլուր չարչարանքների ներքոյ իր վերջին ունեցածն է ծախում, մի այլ տեղ մահու սպառնալիքներով կրօնափոխութեան են մղում հայ մասսային...

Եւ ամէն տեղ դաւեր, անվերջ դաւեր...

Եւ գեռ գտնւում են մարդիկ, որո՞շոք, անգիտակից մարդիկ, որոնք այդ անդադրում ու գժօխային դաւերի հանգէպ քաջութիւն ունին ասելու մեզ. „Թողէ՛ք ձեր յարձակումները, հրաժարեցէ՛ք պայքարից, մի՛ խռովէ՛ք ժողովրդի հանգստութիւնը“...

Անպատասպար, թափառական հօտը աղիողորմ գանգատներով գիծում է վիճակների առաջնորդներին, վերջիններս տեղեկագրում են արիւնոտ փաստերը հայոց

պատրիարքին, իսկ պատրիարքը ի պատասխան այդ բուլրին՝ շրջաբերականներ է տարածում, խաղաղութեան ու հնազանդութեան հրաւեր է կարգում բազմատանջ ժողովրդին:

Դիւանագէտն անգամ սոսկում է այդ ժողովրդի տառապանքներից, իսկ հայ ազգի պաշտօնական ներկայացուցիչը շարունակում է սրտաշարժ հաւատարմութեամբ կատարել իր տիրոջ հրահանգները:

Զրկայ աւելի նողկալի և աւելի աղետաբեր բան, քան այդ ծառայական համակերպումը: Վիճակների առաջնորդներն ու փոխանորդները խոր գիտակցում են այդ, և այսօր նրանցից շատերը „ըմբոստներ“ են արգէն... Ի տես ժողովրդի սեւ թշաւութեան և պատրիարքական ամուլ „Թագրիւնների“ նրանք հետզհետէ իրենց համակրութիւններով յեղափոխութեան կողմն են թեքւում:

Մինչդեռ ըմբոստութեան տենդը օր աւելի վարակում է հայրենիքի սրտացաւ ու ազնիւ զաւակներին — յեղափոխութեան հայ թշնամիները խաւարի մէջ կամ բացարձակօրէն առաջ են տանում իրենց շահատակութիւնները: Ազգի „երեւելիները“ վասպուրականի սրտում և ուրիշ „դժոխանգաւոր“ տեղերում բարձրաձայն յորդորներ են ուղղում ժողովրդին՝ հետամուտ լինել „խռովարարներին“, բռնել ու յանձնել նրանց հայրախնամ կառավարութեան:

Հայ մատնիչները խրախուսւում են հայ էֆէնդիներից, իսկ բոլորը միասին խրախուսւում են հայոց պատրիարքից:

Պատրիարք, աղա, մատնիչ, լրտես — հայ ժողովրդի բոլոր ցեղերը, միացած, թեւ թեւի տւած՝ այդ ժողովրդի անունով իսկ կազմակերպում ու առաջ են մղում հակայեղափոխական արշաւանքը: Եւ երկրորդ կամարիլան հրձոււմ է, տեսնելով իր հաւատարիմ ծառաների այդ անսահման հաճոյականութիւնը:

Դառն է, պժգալի է իրողութիւնը: Մարդիկ դիւցազնական անձնւիրութեամբ նետւում են արհաւիրքների մէջ՝ միակ փրկարար ուղին ցոյց տալու կոտորուող ժողովրդին, — իսկ հայազգի ցեղերը որսկան շների պէս հետապնդում են նրանց ու գահճի վրէժխնդրութեամբ մատնում:

Եւ — զարմանալի բան — որքան աւելի է լարւում հայկական ճգնաժամը, որքան աւելի է հարկադրւում մեզ կուրի, դիմադրութեան անհրաժեշտութիւնը, այնքան, կարծէք, աւելի է աճում այդ ցեղերի թիւը:

Իրողութիւնը քստմենք է, բայց սարսափեցնող հանգամանք չունի: Աւազուց է, որ գոյութիւն ունի այդ ներքին, անխուսափելի պատուհասը: Աւազուց է, որ ժողովրդային պարագիտների վոհմակները՝ հնազանդւելով մարդկային ամենացած բնագոյումներին՝ ճգնում են խորտակել յորձանքի մէջ տարուբերող յեղափոխական նաւի առաջ գաստները: . . . Նաւը, այնուամենայնիւ, խորխտ, անդլըդ-ւելի՝ առաջ է լողում գաւերի ու փորձութիւնների միջից, աջ ու ձախ շանթեր նետելով չարաշուք հակա-ոսկորգների վրայ:

Եթէ Օրմանեանները սխտեմաբար ու առանց խղճա-հարւելու փակել են ուղում բողբող բերանները, եթէ նրանք ժողովրդի մինչև երկինք հասնող աղաղակների հանգէպ՝ «խաղաղութեան» ու «հնազանդութեան» քա-րոզը միայն ունին իրենց շրթունքների վրայ — ապա լաւ պիտի գիտենան նրանք, որ երկնային դատարանը միակ ատենը չէ, ուր պիտի քաւեն իրենց մեղքերը:

Եթէ հայ ժողովրդի տականք՝ աղաները, լրտեսներն ու դաւաճանները բնաւ չեն գարշում սուլթանական սպասաւորի անարգ պաշտօնից, — պիտի գիտենան, որ հայ տէնօրիստը իր ամենօրեայ դժեգակ պայքարի մէջ մի վայրկեան անգամ չի մոռանում նրանց:

Որքան էլ մեզ համար կսկծալի լինեն եղբայրասպա-նութեան տխուր արարողութիւնները, — պիտի շարուն-հակենք այն՝ առանց վարանելու ու խղճի խայթ զգալու:

Յեղափոխական նեմեզիգան գութ չունի ազգադաւ-ցեցերի համար:

Մ Շ Ե Յ Ո Ւ Մ Օ Ր Ա Ղ Ա Ձ Ա Ն Ք Ր

Թիփի, բօրան մութ գիշերին
Կը պտտուի ֆէդային,
Պատռոն տաշին խաչիակ թալած
Ձեռքին թուանք ու սուին:
Ա՛խ, ձեզ մատաղ, ջան ֆէդայիք,
Ձեր մէր ձեզի թող մեռնի,
Մշու սուլթան Սուրբ Կարապետ
Ձեզի քօմակ թող եղնի:
Դուք վախճուցիք քուրդ անօրէն,
Քշիք մեր սար ու ձորից,
Քաֆըր քրդի աչք վախեցաւ
Ջան ֆէդայու գուլուլից:
Ա՛խ, ֆէդայիք, ձեր սատաղէն
Ձեր խէտ տարէք զիմ տղէն
Ձեր խէտ մռնի, ձեր խէտ ապրի
Ազգի մատաղ զիմ տղէն:
Թող դէն թողնի խարոր ու մաճ
Իմ մէկ ու ճար ազիզ լաճ,
Քիչ թուանքի խեթ թող խաղայ
Էլ թո՛ղ չըտայ քրդին խարձ. . .

ՉԱՐԽԻ-ՖԱՆԱՔ

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Տ Ա Ր Օ Ն Ե Ն

I

1 մարտ 1902

Տեղիս կառավարութիւնը սկսած է պաքսմաթ եփիւ տալ. ձիւնը վերցւելուն պէս իր դիտաւորութիւնն է ամբողջ զօրքը Սասուն հանել, մէկ կողմէն տղերքը հալածել և միւս կողմէն ալ կայսերական իրատեով զօրանոցներ շինել Կէրէ-Վուզան, Շէնըք, Սէմալ և ռազ-մագիտական կէտերու վրայ և Գաւասարի ժողովուրդն ալ վար իջեցնել. իր բուն նպատակն այդ է. և ձեռքէ գալածը պիտի աշխատի ի գործ դնելու: Արդէն տեղա-զօրաց կեդրոնատեղի ըլլալը կը հասկնանք, իսկ աշնան Կարինէն ու Խարքերտէն եկած ամբողջ զօրքերուն վրայ տասը օր առաջ 500 հեծեալ զօրք ևս եկաւ:

Սարսափելի և անխիղճօրէն թահախաթ կ'ընեն թէ քաղաքիս մէջ և թէ գիւղերը. միւլազըմ (յիսնապետ) Հաճի Ալլահփէրտի էֆ.ին ելած է գիւղեր, ամէն մէկ գիւղ 1-2 օր մնալու պայմանաւ. և ամէն մէկ գիւղէն իսկոյն 5-10,000 զօր. կը պահանջէ. որ գիւղ որ առաջին անգամ իջնէ, իսկոյն թէ այրեր և թէ կիներ զօրաց միջոցաւ հաւաքել կուտայ, կը յերկացնէ զամբողջն ալ. քով քովի կը կայնեցնէ (թերևս լսած էք որ գիւղերու ախոռներու մէջ ջրհորներ կան որ տավարներուն ջուր կը խմցնեն), ջրհորներէն պաղ ջուր քաշելով կը լեցնէ այդ խեղճերու վրայ, ու կըսկսի կակուղ և գալար վա-րցներով ոստիկան ղինւորաց և զօրքերու միջոցաւ ամէն մէկին 3-50 փայտ զարնել, մինչև որ անկենդան գետին կիներան. անկէ վերջ նոր կըսկսի հարկահաւաքութիւն, որ 1 օրուան մէջ խեղճերն գիրենց եղած չեղածն կը ծախեն կուտան. արդէն թահախաթներն որ գիւղ որ մտնելու լինին, մագործներն ալ հետերնին կը պտտցնեն, որու որ մէկ կով կամ ոչխար իսկ լինի պիտի զօրագին կերպով ծախել տան: Արդէն սկսած են հողագործի վերաբերեալ տավարներն ալ ծախել. այս գարնան ինչով պիտի խեղճեն լուծք ընեն չեմ գիտեր, իսկ քաղաքին մէջ հարկահաւաքութեան համար ծեծ ու քաշ այնքան չկայ, բայց այն որ չունենայ գրամ տալու, իր տան միջի կահ կարասիք, անկողին, ուտեստի ցորեն, ինչ որ է բռնագին կը բերեն ծախեն, և եթէ ատանկով հաշիւնին չլմնայ, բանտ կը դնեն, ուր այժմ 100-է աւելի մարդեր տուրքի պատճառաւ բանտարկւած են: Յարտոգը գիւղացի Խանօ անուամբ երեւելի և հաց տուող հայ մը, քիւրդ Հաճի պէյի ծառաներու ձեռամբ երեկոյնան Ժամը 12-ի միջոցին հրացանի մը գնդակով սպաննւեցաւ, պատճառ՝ որ ինք հարուստ էր. քանիցս, ինչ որ Հաճի պէյ զոհեր ուզեր է, թէ փարայ թէ ցորեն և թէ տավար՝ տւեր է, բայց այս վեջի օրերուն մէջ որ նորէն բան կուզէ եղեր, կ'ըսէ թէ հիմակ պատրաստ չկայ ի վերջոյ կուտամ, այդ ըսելուն, Հաճի բէկի հրամանաւ իսկոյն ծառան կը զարնէ և կը ձգէ հեռանայ. գիւղի մէջ զօրք ալ կը լինի, բնաւ ետեւէն չեն երթար: Մէկ մ'ալ անցեալ աշնան որ թիւրք ժողովուրդ իրենց մէջ ճան-բէզար անւամբ խումբեր կազմելով Մշոյ մօտակայ գիւղեր 30-40 մարդասպանու-թիւններ ըրին ու գիւղեր աւարի տւին. հիմակ հետը-հետէ այդ խումբերու թիւը երթալով սուտարացած է քաղաքիս մէջ և սկսած են ասդին անդին երթալ և

քիւրդերն ալ խրախուսել որ ջանքերի պաշտօն ստանան: Պալաքցի անունով աշխարհի ցեղապետ Հաճի Ֆէհրուն իր ամբողջ ստորագասեալներին գրած է որ ցարնան գալուն պէս պիտի վերսկսին իրենց չարագործութիւնները ի գործ դնել խեղճ և անմեղ ժողովուրդի վրաս: Իրաւ որ ամբողջ Հայ ժողովուրդ այսօրվէն ախ ու վախի մէջ ինկած են, թէ ի՞նչ ընեն չեն գիտեր... Բնաւ կառավարութիւնը իրենց չի դիպչի. այժմ 150-էն աւելի Հայ քաղաքական յանցաւորներ բանտարկւած կան, որոնցմէ 90% խեղճ և անմեղ մարդիկներ են, հարցաքննութիւն արդէն չկայ, ըլլայ ալ տարէնը 2 անգամ չեն հարցաքննի: Սասունցի Խալիլ աղան որ Անտոկայ կողմեր սպաննեցաւ, այդ պատճառաւ 40-50 հոգի բանտարկւած հայեր կան որ տարի ու կէսէն աւելի է որ բանտն են, այս օրեր ատոնց հարցաքննութիւններ սկսած է. արդէն բոլորն ալ անմեղ ըլլալին յայտնի է, բայց շատ կարելի է որ ինչ որ խեղճեր են, դրամ չունին որ կաշառք տան, մահաւն դատապարտին, իսկ ունեցողներէն մի քանիս թերեւ թիւնով մը ազատին, բայց թէ ե՞րբ այն ալ յայտնի չէ:

II

14 մարտ Մուշ

Ռուսաց քօնսիւլ Տումանսկի հեռագաւ մեր կողմերէն: ԽժՀԹԼԹԻԼՆԵՐԸ վերսկսեցան: Վատաղած թիւրք զինւորներ, քիւրդեր իրենց հրամանատարին թողաւութեամբ ահաբեկ տառապանաց կը մատնեն նորչէն գիւղին դժբախտ հայերը, որոնցմէ մէկ երկուքը կըսպաննեն, բոլոր տունները կը կողոպտեն, սարսափահար ընելով բնակչութիւնը. ձեռք ինկածները կը խոշտանգեն, մանաւանդ որ քստմեղի է աղջիկները և նոր հարսները կը բռնաբարեն չարաչարօրէն: Քառասունի մօտ աղջիկներ և հարսներ բռնաբարւած են թող զայլաւ Էատ մը կիներ երեսներ կը վիժեն, սոսկումը այն աստիճան կըլլայ մինչև առաւօտ որ գիւղին բոլոր ժողովուրդը ցան ու ցիր կըլլան: Յիշե՛ք քանի մը սպաննութիւններ ալ: Դեկտ. 27-ին Արտօնգ գիւղի ուս Բօզօն իրիկունը իր տան մէջ գնդակահար կըսպաննուի Մառնիկցի քիւրդերէ: Վարդօյեան իր տունը վերադարձին՝ Գառնեցի Ռսիան Յակոբեան չէրքէզներէ և քրդերէ բռնելով ճամբու վրայ կտտաւահար կըսպաննուի. դահիճները ողջ ողջ անոր թեկըր և գլուխը կը կտրեն և իսպառ մերկացնելով ձիւներու մէջ կը թողուն: Բերդակցի աղքատիկ Յովէ անուն հայ մը ուէժի գօլճիներէ այնքան կը խոշտանգուի որ երկու օրէն կը մեռնի, որովհետև ուէժ առանձին տեղ խլամի պատահող ամէն հայ կըսպաննուի և կը յօշոտուի: Այս պահուս Մշոյ դաշտի հայերը սոսկալի և նման չտեսնւած չարչարանքներէ կը տառապին հարկահաւաքներու և ոստիկաններու ձեռքէն, որոնց աւանդակօն բռնութեանց վրայ մի նոր բքն ալ աւելցւած է: Ողորմելի հայերը, ձմրան սաստիկ ցուրտին, պաղ ջուրի մէջ ընկղմել յետոյ, կը հանեն ու կը գանակոծեն. բազմաթիւ գիւղեր այս փորձութենէ կանցնին հիմակ: Խորին յուզումով լսեցաւ երկու օր յառաջ Գաշտի Գոմս գեղէն Գրիգորի կին Այմաստի սպանումը ահաբեկ չարաչարանաց ներքե: Հարկահաւաքները այդ աղքատ կիներուն վրէժն ջրով լաւ մը կը թրջեն, ապա գետինը գլորելով երեսի վրայ պառկեցուցած այնքան կը ծեծեն որ վերջապէս կը մեռնի: Ընդհանուր տառապանքները ուրաւագիւ շատ երկար է...

ՆԱՄԱԿՆԵՐ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԵՆ

I

8 յունւար 1902

Դեկտ. 16-23 եօթնեկին մէջ ամէն գիշեր Ռընտվան գիւղը և շրջակայքը գողերու ու աւազակներու յարձակումներէ գլուխ չեն կրնար առնել: Մերթ գիւղացիք արթննալով զէնքով կը դիմադրեն, մերթ վախնալով նիւթական մեծ փնաններ կուտան: Նոյն շաբթուան մէջ Մուսըրբան աշիրէթէն 12 հոգի Ռընտվանի մօտիկ Կրպոյի ջաղացքը կը կոխեն և հոն գտնուող 12 էշերը իրենց բռններով կառնեն կը տանին: Գիւղացիներուն նախիրը ևս յափշտակւած և քանի մը տուններ ալ կողոպտւած են գիշերով: Պըշարի եղբայրը ճէմիլ երկու սպանութեանց մեղքը քաւելու համար, ըստ սովորութեան, կառավարութեան գլխաւոր պաշտօնէից մեծկակ գումար մը պարտաւոր է վճարել, զոր հայերէն հաւաքելու է: Ռընտվանի միւթար Օհան բան մը վճարելու անկարողութիւնը յայտնելով, ճէմիլ կատղած դքեղ շունեքուս պիտի կերցնեմ՝ ըսած է: Ասոր վրայ գիւղացիք խոստացած են պայրամին օրը տանիլ իրեն ուզած գումարը ի նշան հպատակութեան: Պըշար, ամէն պարագայի նիւթական նեղութիւն մը ունեցածին, հայերու քսակին կը դիմէ, չի տուողին կենդանիները կառնէ: Այսպէս գրաւած է այնգասրցի Կրպոյի 6 եղբորը, ինչպէս նաև Բալոնի գեղացի հայու մը 5 եղբորը, որովհետև ասոնք իրեն վճարելու դրամ չունէին: Պշարի կացութիւնը շատ փափուկ է այժմ, իր աշիրէթի մարդիկը կը բռնադատէ որ ունեցածնին չունեցածնին ծախսեն և զէնք գնեն:

Դեկտ. 21-22-ի լուսանալու գիշերը, ժամը 7-ին, Տիգրանակերտի ոստիկանաց հազարապետը քանի մը ոստիկաններով քաղքին սրճարաններէն մէկը կը կոխէ և հոն գտնուող թիւրքերուն վրայէն 70 կտոր զէնք կը գրաւէ, բացի խոյս տաւածներէն ու պահածներէն: Քրիստոնեաները քիչ մը շունչ առնելու վրայ էին այս դէպքին վրայ, երբ երկու օր ետքը միւթէսարիֆը նոյն գրաւած զէնքերը աճուրդի հանեց իրենց նախկին տէրերուն ծախելով զանոնք:

Այն տարաձայնութիւնը, թէ Բաղէշի կուսակալութեան մէջ 1,500 յեղափոխականներ ցրւած են, ահ ու սարսափի մատնած է կառավարութիւնը. այնպէս որ Տիգրանակերտի հազարապետը 30 հեծեալ զինւորներով քաղքին շրջակայքը 1 1/2 ժամ հեռաւորութեան վրայ ման կուգայ հսկողութեան համար:

II

14 յունւար

Հարստահարիչ քիւրդերն այս անգամ վերջնապէս համոզելով անվարկ կառավարութեան մտացածին ուժին և կարողութեան, առաջընէ անհամեմատ եռանդով սկսած են իրենց շահատակութիւնը: Ահա մի քանի նմոյշ.

Ա) Դեկտեմբերի սկիզբները թահսիլաթի համար զօրք կը շրջագայի Զօգի գայմագամութեան ենթարկւած գիւղերն: Հարկահաւաք զօրքերն Նուաշա գիւղն մտնելու ժամը՝ գեղին տէրը և աղան Ալիէ Եիւնըս զինուորութեամբ դէմ կը դնէ և զօրքերէն մին ծանր կերպով վիրաւորելով կը փախցնէ զօրքերը: Վիրաւոր զինւորը Սղերդ տարւելով քիչ օրէն Մուհամէդի գիրկը կը դիմէ:

Բ) Դեկտ. 9-ին գիշերը Ղարաբաղի աղաներին Պըշար, մի քանի արքանեակներով Այն Գասըր գեղին վրայ կը յարձակի և կըսպաննէ երկու քիւրդ: Կը հաւաստեն թէ մինչև այսօր Պըշար աղան 43 հոգի սպաննած է եղեր:

Դեկտ. 15-ին գիշերը գողեր կը մտնեն հայազգի Ապտո Յակոբեան անուն կոչակարին խանութն և կը կողոպտեն զայն: Առաւմարութիւնը լուռ ու մունջ ակա- նատես կը լինի այս ամենուն: Իր միակ զբաղումն է քրիստոնեաներէն սուրբ հաւաքել: Այս օրեր նորէն սկսած են բուռն խտուրտներ տրոց հաւաքման գործին մէջ:

Հինգ տարիներէ ի վեր Սղեւրդին մէջ կը գտնուի զին- տրական բժիշկ (գօլաղասի) Գատրի անուն, որ իր լիւր, վայրագ, յանգուգն արարքներով ու շահատակութիւն- ներով մեծ պատու հաս մ'ընդած բոլոր տեղացիներուն ընդհանրապէս և կաթողիկոսներուն մասնաւորապէս: Ամէն օր շուկայի հրապարակին վրայ խել մը մարդիկ նշաւակ կ'ըլլան անոր այլանդակ քմահաճոյքներուն: Զօրքերու ազդեցութեամբ ուզած կ'ինն կամ աղջիկն իր կրից կը գործածէ: Քաղքին էջ գիւտ տաճիկ երիտասարդութեան հետ գաշնակցած անյուր բռնաբարութիւններ ու չարա- գործութիւններ կ'ընէ անպատիժ:

Սեպտ. 14-ին իր սովորութեան համեմատ Տօթթօրը կաթողիկոսներու թաղի կայերը օղի խմելու համար նստած էր տեղացի բռնաւոր երիտասարդներէն Ապտե Գալուս և Նասրի Շամատէր անուն անձերու հետ: Այդ միջոցին այնտեղէն կանցնին կաթողիկ ազգէն Հաննա Ճըճէ և Մ. Եռսուֆ անձինքը. տօթթօրն իսկոյն իր բաժակակից ըն- կերներով լաւ մը ծնծել տալէն յետոյ, կառավարութեան բանտարկել կուտար:

Դեկտ. 19 շաբաթ օրը իրիկնագէմին, զինուոր մը քողարկւած կ'ին մը հետն առած հայոց թաղն կուգայ զայն տեղ մը խցելու համար. մէկ-երկու գուռ զարնելէ յետոյ Իսրայէլ Էմիրեան անուն հայու մը տան դուռն բաց կը գանէ և անկից ներս մտնելով՝ տանտիրուհի- ներուն կըսպաննայ որ քոյրն (այսպէս կ'անւանէր) մէկ քանի վայրկեան պահեն իրենց մօտն, մինչև որ կարենայ թաղին մէջ առանձնասենեակ մը վարձել 8-10 օրւան համար. խեղճերն թէև կը պոռան, կ'ընդդիմանան, բայց առ ահի լռելիայն ու յակամայս հաւանութիւն կուտան և ներս կ'ընդունին յիշեալ կնիկն, որ սակայն, ինչպէս վերջերս հասկցեցաւ, իր քոյրն չէր այդ, այլ իր հոմա- նուհին: Զինուորն կերթայ և կէս ժամէն կուգայ կը տանի իր կրծօնն իր վարձած տունն, ուր մինակ մէկ գիշեր կը մնայ, կը փախչի դրկից զինուորական զապիթի մը երիտասարդ տղուն ձեռքէն: Զապիթորդին՝ կինարմատին փախուստին վրայ կատղած, խնդիրն գրով մը Աքարիյէ գայմագամին կիմացնէ համակ զրպարտութեամբ լի և հայուն բոլորովին աննպաստ: Գայմագամն որ ինքնին հայատեաց մարդ մըն է, բիրտով ու գաւազաններով 15-20 նէֆէր զօրք կը զրկէ չափուշի մը հետ հայն ձերբակալելու—որ բարեբախտաբար խնդրոյն ծագումէն առաջ բացակայ էր Սղեւրդէն— և իրեն ներկայացնելու համար. եկան, խուզարկեցին տունն. փնտռեցին, ամէն ծակուծուկ մտան, բայց ոչինչ գտան. յանիրաւի տան- տիրուհիներն ծեծեցին, պզտիկներն լազուցին, դռներն խորտակեցին. թաղեցիներուն պատուոյն սպառնացին և զեռ ինչեր. մէկ խօսքով ամբողջ թաղն ահ ու սարսափի մէջ ձգեցին: Դիմում՝ եղաւ, լայց թիւրքն միշտ անողոք մնաց:

Ն Ա Մ Ա Կ Մ Է Ր Ս Ի Ն Է Ն

14 ապրիլ 1902, Մէրսին

«Արգարութիւնը ամէն կառավարութիւններուն հիմն է» ըսւած է. կ'երևի այդ պատճառաւ ըլլալու է որ հիմը արդէն խախտւած թիւրք պետութեան կառավա- րելու եղանակին մէջ «արգարութեան» միտքը անընա- կանաբար իր հաւասարակշռութիւնը բոլորովին կորսն- ցուցած է: Այն ան հայուն որ կամաւ կամ՝ ակամայ թիւրք դատարաններէն ներս իր ոտքը կը կոխէ. եթէ պարզ յանցանքով (délit) կանչուած է հարցաքննիչ դա- տաւորի մը առջև, շատ չանցած ինքզինք պիտի գտնէ եղեռնադատ ատեանին առջև, եթէ քաղաքային դատ մ'ունի տաճիկ հետ, բնաւ հարկ չկայ կասկածելու որ դատը պիտի կորսնցնէ: Ամենամեծ խելացիութիւն պիտի ըլլայ հայու համար ուրեմն, աչքը տեսնելով իր իրա- ւունքներէն վազ անցնիլ և բերանը սրբել չմոռնալով նաև գէթ արտաքնապէս, էրեսանց բարեկամութիւնը չխզել իր իրաւունքը բռնաբարող թիւրքին հետ, եթէ ուզէ անոր մի ձրի զրպարտութեան զոհ չերթալ: Եթէ թիւրքի մը վրայ եղող արդար իրաւունք պաշտպանելու յամառիս, կորսուած մըն ես. նախ կըսկսին դատաւորներու կողմէն անընդհատ ձգձգումներ, գնա-եկուններ, վերջը կուգայ փաստելու եղանակը, որ մինակ թիւրք դատա- ւորի մը խիղճը կրնայ տանիլ: Հայը թող հազար պաշ- տօնապէս վաւերացեալ և անպաշտօն sous seing privé տօքիւմաններ ցոյց տայ, օգուտ չունի. նա կեղծ է քանի որ հայու մը կողմէն կը ներկայացուի և հայ իրաւունք մը պիտի պաշտպանէ. վկաներ պիտի ներկայացնես, օհ՜ անոնք, հայեր են, կեաւկուններ են, և վկայութիւննին ուեէ արժէք մը չունի. թիւրք վկայ բերել, ագ ալ բո- յորովին անհնարին դարձած է. վասն զի ոչ մի թիւրք ի նպաստ հայու վկայութիւն մը ընելու ոչ կարող, ոչ ալ տրամադիր է: Ուրեմն ակամայ անիրաւ մըն ես, վասն զի իրաւագուրկ մըն ես: Հետեւաբար շատ քիչ կը պատահի որ հայ մը թիւրքի դէմ դատ վարէ, և ստիպւած է աշխատիլ որչափ կարելի է դատի մը տեղի չտալ թիւրքի մը հետ, վասն զի համոզւած է որ այդպիսի մի դատ որչափ աղետաբեր պիտի ըլլայ իրեն և իր ընտանիքին: Ուստի կրնաք երևակայել այս իրաւագրկութեան տխուր հետեանքները, տնտեսական քայքայում, աղքատութիւն և փճացում, և ահա արդէն այս է թիւրք իշխանու- թեանց միակ և միակ նպատակակէտը, որուն կը ձգտի միշտ և ամէն պարագայի մէջ:

Հայերուն դէմ իգործ դրւած այդ սանձարձակ անի- րաւութիւններ, զրկանքներ երբեմն անորոժակը կը բանայ թիւրք պաշտօնեաներուն օտարահապտակներուն ալ հրամցնել, եթէ առիթը ներկայանայ, այդ դառն պտուղ- ներէն թէև անոնց պատկանած տէրութիւններէն ոմանք, իրեն հպատակ անհատներուն շահերը պաշտպանելու համար մարտանաւեր ճամբեն:

Ասկէ 2 ամիս առաջ Ադանա պարի դաստաու մը կուգայ, իտալական հպատակ հրէա մը, Դէտէշի անու- նով: Ընտանիքն ալ հետն էր: Մարդը կուսակալէն ար- տօնութիւն կը խնդրէ մի քանի ապօնէներուն պարի դաս տալու համար: Կուսակալը կը մերժէ: Այս մերժումի վրայ կը դիմէ իր հիւպատոսարանին կը պարզէ եղելու- թիւնը և նա իրեն կը պատուիրէ որ երթայ և գործը շարունակէ, Հիւպատոսին տւած հրամանին վրայ Դէտէ-

շին կըսկսի իր դասաւանդութիւնները: Բաւական հայ երիտասարդներ ալ բաժանորդ կը գրին և կըսկսին դաս առնել: Երբ կուսակալը կը լսէ, շուտով հայերուն խստիւ կարգիլէ Դէտէշիի գասերուն յաճախելը, բայց յոյն և օտարազգի բաժանորդներ կը շարունակեն:

Օր մըն ալ ի՞նչ կը տեսնես: Գոմիսէր և քանի մը բօլիսներ կերթան մարդուն տանը առջև, բռնի կ'արգիլեն բաժանորդներուն մուտքը և հետեւեալ օրն ալ բռնի կը մտնեն մարդուն տունը, ներսը գտնուող կահ-կարասիքն ալ դուրս կը նետեն և Իտալիոյ թագաւոր Էմմանուէլ II-ի մի պատկերն ալ ոտքի տակ կ'առնեն և կը բղքտեն: Խնդիրը աւելի կը ծանրանայ մարդուն կնկան հիւանդութեամբը: Դէտէշին անմիջապէս կերթայ հիւպատոսը կը գտնէ և հիւպատոսը քանի մը գազաններ կը լրկէ, որոնք կեղծ ըմբիշներու պէս քանի մ'օր պոտեցան դրան առջև, իրենց չուխայէ շէքքէններուն փայլը խտտեցնելով անցորդներուն աչքին առջև: Ալ իտալական թարգմանը դիմում դիմումի վրայ կ'ընէ, եղելութիւնը կը տեղեկագրէի Հալէպի ընդհանուր հիւպատոսին, որը իր կարգին խստիւ կը հեռագրէ Մէրսինի իտալական փոխ հիւպատոսին, որ այս խնդրի մէջ իր աւանդական շահասիրութիւնը և դանդաղութիւնը մէկ կողմ դնէ: (Դժբախտաբար Մէրսինի իտալական փոխ հիւպատոսը սեղանաւոր վաճառական յոյն մըն է, որուն շահերը միշտ կը պահանջեն որ շատ մը զեղծումներուն վրայ աչք գոցէ): Փոխ հիւպատոսը դիմումներ ըրաւ իր թարգմանի միջոցաւ, բայց դիմումները տակաւին ելք մը չունեցան: Ա՛րսեն թէ բաւական պատասխանատուներ կան այս խնդրոյ մէջ: Առաջինն է Ադանայի վիլայէթի թարգման Աւետիս Սիւլեմանը, որ լքտի և սինլքոր մարդ մըն է: Այս թշառ արարածը ամէն բանի մէջ քիթը կը խօթէ. մանաւանդ հայ ազգային-կրօնային գործերու մէջ: Կաթողիկոսական ընտրութեան առթիւ բաւական մեքենայութիւններ և ստորութիւններ ըրաւ: Ինք հայ հռովմէական մըն է և եղբայրը նախկին ոստիկանապետ Նազըմի արարած տխրահռչակ Աւոն Սիւլեմանի:

Գալով Կիլիկիայի հայութեան—միշտ միեւնոյն յանկերպներն են, որ իրարու կը յաջորդեն, մասնակի սպաննութիւններ, առեւանգումներ, հարստահարութիւններ, թալաններ, կառավարական կեղեքումներ... և ապոնց բոլորին հեղինակներուն անպատժութիւնը:

Ադանայի հայ հռովմէականներուն գերապայծառ Տ. Պողոս եպիսկոպոս թերզեան հեռագրաւ մը Պոլիս կանչեցաւ. կ'ըսեն թէ պաշտօնանկ եղած է. երևի արտասովոր պատճառ մ'ըլլալու է, որովհետեւ ինքը Ատանայի եկեղեցւոյն պսակեալ եպիսկոպոսն էր: Սա մարդը ասկէ քանի մը տարի առաջ Եւրօպա գնաց և յանուն հայ որբերուն մեծաքանակ հանգանակութիւն մը հաւաքեց 10-15,000 դսկի կ'ըսուի: Այս երանելին վերոյիշեալ դրամը փոխանակ յատկացնելու որբանոցներու շինութեան... ագարակաշինութեան յատկացուց. անանկ որ հայ որբերը բոլ մըն ալ չստացան: Եւ կրօնաւորները աշխարհականները միայն ենթակայ նկատելով ամէն տեսակ խաչագողութեան իրենց միայն կը վերապահեն ամէն սրբութիւն...

Կ'երևի թէ սուլթանը իրեն շահերուն հակառակ գտած է գերապայծառին պտոյան յեւրօպա:

Թիւրք նաւահանգիստները 2ինական պարիսպներ պարձան հայերուն դէմ: Մարդ ստոյգ ֆալափար մը

կազմելու համար այն գազանային հրէշութիւններուն, որ անխղճօրէն ի գործ կը դրին հասնող հայերուն հանգէպ, թրքական նաւահանգիստ մը գտնուելու է: Խեղճ հայեր, որոնք տարիներու երկար շաբթի մը մէջ չարաչար աշխատութիւններով և դժնդակ զոհանքներով կուգեն իրենց տունը, իրենց ծնողներուն գիրկը, իրենց ամուսնոյն, իրենց զաւակներուն քովը վերադառնալ, կուգան գլխիկոր, կ'աղաչեն, կը պաղատեն, ոտքերը կը պահեն երբեմն նաւահանգիստը հսկող անխղճ թիւրք ոստիկաններուն, բայց անօգուտ. լուտանք, հայհոյանքներ տեղացնելէ և երբեմն ալ վրայի դրամները շորթելէ յետոյ ետ կը ձամբեն: Անցեալ օր 70 ամեայ պառաւ կին մը, որ ծանր հիւանդ էր, իր պղտիկ թոռներով հոս հասան: Պառաւը իր ծանր հիւանդութեան տաքնապին մէջ աղաչեց, պաղատեց, դառնապէս լացաւ ըսելով թէ արդէն պիտի մեռնի բայց թող տան որ երթայ իր հայրենիքի հողի վրայ մեռնի և հոն թաղուի. բայց իզուր անցան և հոմաշիկով մակոյկը դրին ու ետ ձամբեցին: Ար խնդրեմ՝ ըսէք մեզ, թէ մինչև ե՞րբ հայը իր հայրենի հողին վրայ մեռնելու իրաւունքէն ալ զրկած պիտի մնայ...

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր Վ Ա Ն Ե Ն

I

18 փետրւար 1902

Ֆէրիզ Հիւսնի փաշայի ծայրայեղ հայատեաց մ'ըլլալը նախկին թշնամեցութիւններու մէջ բաւական պարզած էր: Այս գազանը իր որդի հարիւրապետ Սերվէթ պէյի հետ երգեալ թշնամի մըն է հայութեան, իր մշտական զբաղումն է դաւադրութիւններ սարքել՝ կառավարութիւնը, զինւորականութիւնը և թէ տաճիկ ամբոխը հայերու դէմ գրգռելու համար: Ձէքի փաշայի ծրագիրներն ու հրահանգներն գործադրելու առաջին կարգի ընդունակութիւններ ունի: Վասպուրականի համիդիէի գլխաւորներն իրենց համարձակ լծութեան մէջ քացարձակապէս վստահ են Հիւսնի փաշայի պաշտպանութիւնը վայելելու, եթէ կառավարութիւնը համարձակի (?) իրենց դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու, երբ հայերը յանդգնին բողոքելու:

Առսակալի խաղաղասէր ընթացքը զինքը այնպէս կատղեցուցած է որ առիթ չի փախցնելու անոր դէմ բողոքելու Մեծ-Մարդասպանին և զայն շրջապատող գալլերու վոհմակին. միշտ թէ ինք և թէ իր համախոհ համիդիէներ շշուկ կը բարձրացնեն և կը տարածեն յեղափոխականներու մասին, թէ հարիւրաւոր ֆէդայիներ անցած են սահմանադիւզէն, Պարսկաստանի մէջ ահագին ուժ կայ, Վան գազանը երբ մի լեցւած է էլն: Մի քանի անգամ հեռագրեց Բ. Դուռը և արտօնութիւն խնդրեց խուզարկութիւններ ընելու ի հեճուկս կուսակալին, թէ և չենք գիտեր ինչ պատասխան ստացած ըլլան, սակայն երբեմն երբեմն տեղի ունեցած խուզարկութիւններ բողոքովն պարապ հանած են իր փայփայած յոյսերն ու երազները: Իր այս հայակործան նպատակի իրագործման կը նպաստեն իրենց դաւաճանութեամբ նշանաւոր կարգ մը ստոր հայ վաճառականներ և մատնիչներ, որոնց իբրեւ պարագլուխ կարելի է յիշել Չարըզճեան քէօու Աբրահամ իր եղբայրներով և Գաբամաճեան Պետրոս

իր համախոհներով: Հիւսնիի հակառակութեան և ատե-
լութեան ենթակայ են նոյնիսկ կառավարական հայ պաշ-
տօնեաները և ոստիկանները, որոնք թէև ամէն տեսակետով
հաւատարիմ կուսակալին, սակայն չեն օժանդակեր իրեն՝
իրենց լրտեսութիւններով և դաւաճանութեամբ: Հիւսնի
հաւատարիմ հետեող մ'ըլլալ կուզէ Պահրի փաշային
իր անգթութիւններով և հայը միայն աղքատ և թշուառ
վիճակի մէջ տեսնել կուզէ, ինչպէս Պահրի փաշան:
Վերջինս օր մը, ինչպէս կը պատմեն, հայ մը կը տեսնէ
բոլորովին ցնցոտիներու մէջ, կը դառնայ զինքը շրջա-
պատողներուն և կ'ըսէ. «Ահա այս վիճակի մէջ պէտք
է լինի րա յեան, ասկէ աւելին հարամ է անոր»:

Անցեալ Բաժանի մէջ իր այս ատեւութեան զոհ
դնաց հայ երկրորդ կոմսար Եղիա էֆ. Գալճեան: Ան-
ցեալ տարւայ գեկտ. 12-ի երեկոյին, Եղիա էֆէնտի
Մարտիկեան Մարտիրոսի հետ կաթողիկ միսիօնարներու
շնորհաւորութեան կերթայ Ծնունդի առթիւ, ապա նոյն
ընկերոջ հետ Շահպաղի գիւղը կերթայ, ուր իր եղբայր
թահախտար Արշակ էֆ. հազար և մի անգթութիւն-
ներով տուրք հաւաքելու զբաղած կը լինի. Եղիա կօքնէ
իր եղբոր. քանի մը հայեր ալ ինքը կը գանակոծէ և
ժամը 4-ի միջոցները կը վերադառնայ նոյն ընկերոջ
հետ քաղաք: Երբ Այգեաստանի փողոցներէն սրարշաւ
կը քշեն ձիերնին, կը հանդիպին Հիւսնի փաշայի իր
գրան առջև կեցած իր որդւոյն և քանի մը ժանդարմ-
ներու հետ: Հիւսնի անմիջապէս կը հրամայէ բռնել
վաննը, երբ կը հասնայ անոնց ով լինելու: Ժանդարմ-
ները կը յարձակին վրանին. Եղիան կը բռնեն, իսկ Մար-
տիրոս մազապուր կը փախչի կազատի: Հիւսնի կը հրա-
մայէ անմիջապէս սպաննել այդ կեաւուրը. հրամանը կը
կատարեն ժանդարմներ քանի մը որովաներ (երկաթէ
թելերէ հիւսւած բիր մը ծայրը արձիճով լեցւած) իջե-
ցնելով ծոծրակին և քունքին: Ապա իր ձիու վրայ դրած
կը տանին քիչ մը վար, մինչև զաւրի փաշայի գրան
առջև և հոն ձիէն վար նետելով կը թողուն կը հեռանան:
Դեռ արշալոյսը չծագած չափուշ մը քանի մը ոստիկան-
ներով կը տեսնեն դիակը և կը տանեն պէլէտիէն: Երկ-
րորդ օրը լուր տարածւեցաւ թէ Եղիա էֆ. ձիէն վար ինկած
և մեռած է ըստ կառավարական բժիշկներու տեղակազրին:

Ի դէպ է ըսիլ որ ոչ մի պարտաճանաչ հայ կարող
է կառավարական պաշտօն վարել առանց ստորնանալու:
Արդէն տեղական հայ կոմսարներ, ոստիկաններ և ոստի-
կան զինւորներ ամէնքն ալ ստոր նկարագրի տէր արա-
րածներ են. կաշառակեր և անբարոյական: Վերոյիշեալ
Եղիան իր աստիճանի բարձրացումը կը պարտէր աւելի
իր կաւատութեան, զոր կ'ընէր հայ կիներ տաճիկ պաշ-
տօնեաներու ձեռքը տալով: Իր եղբայրը Արշակ, որ թահ-
սիլտար է բաւական ժամանակէ ի վեր, ոչ միայն տա-
ճիկներէ վար չի մնար, այլ իր անբարոյականութեամբ
և խժոժութեամբ զանոնք ալ կը գերազանցէ: Հայ ժո-
ղովուրդը համեմատաբար աւելի գոհ է տաճիկ պաշ-
տօնեաներէ քան թէ հայերէ, որ զիրենք թիւրքէ մը
աւելի հաւատարիմ ցոյց տալու համար ոչ մի ջանք չեն
խնայեր: Եղիայի տեղ երկրորդ կոմսար եղած է այժմ
երրորդ կոմսար Մկրտիչ: Ամէն ոք հաւատացած է որ
սա պիտի գլէ անցնի իր նախորդներն իր չարութեամբ
և անգթութեամբ, եթէ սակայն վրէժխնդիր և արդա-
րադատ դաշոյնը չգամէ մէճիտիէի նշանը իր կուրծքին
վրայ և վերջ չտայ անոր ազգադաւ կեանքին:

Ազգային գործերու համար չկայ այլևս այն ոգեկորու-
թիւնը, որով նշանաւոր էր Վանայ ժողովուրդը 95-96-ի
դէպքերէ առաջ: Այս քիչ տարիքէն է անցած դարձածին,
կարծես բացարձակ հաւաք մը գոյացած լինի ժողո-
վրդեան մէջ, թէ այլևս կարեւորութիւն չունին անոնք
իր վիճակի բարեփոխման համար: Գործերու ղեկը մնացած
է կարգ մը հարուստներու ձեռք, որոնք երկու կուսակ-
ցութեան բաժնւած իրենց կամքին և հաճոյքին համեմատ
կը վարեն զանոնք: Վերջերս ջանք մը եղաւ գաւառական
ժողովի վերահաստատութեան. սակայն շնորհիւ Գաբա-
մաճեան Պետրոսի և Երամեան Համբարձումի (տէր և
անօրէն համանուն որբանոցին) այդ ալ ջուրն ինկաւ:
Այս երկուքն կը դիմեն կառավարութեան և կը զգու-
շացնեն զայն արտօնութիւն տալու գաւառական ժողովի
ընտրութեան, պահարկելով թէ խռովութիւններ կրնան
ծագել: Ահա կոյր ուսուցիչ մը որ ազգին գրեթէ ողոր-
մութեամբ կապրի, սակայն իր մասնաւոր փառասիրական
շահերու համար ազգին առանձնաշնորհումները բանդելու
կաշխատի: Իսկ մեզի, թոյլ և փառասէր Սահակ վար-
դապետ (առաջն. փոխանորդ) խաղալիկ դարձած է այս
և այն կուսակցութեան ձեռք և բացարձակ գործիք
կուսակալին: Առանց անոր գիտութեան ոչ մի քայլ
չառնել, և նոյնիսկ չի համարձակեր բողոք կամ թագրիր
ալ գրելու եղած հազարաւոր հարստահարութիւններու
համար, վախճալով մի գուցէ անհաճոյ լինի կուսակալին
և զինքը պաշտպանող Բարդուղիմէոս փաշային: Իրաւ է
թէ և բողոքներ և թագրիրներ ոչ մի ազդեցութիւն չունին,
սակայն այդ անամօթներն զգալու են թէ իրենց վրայ
ահագին պարտականութիւն կը ծանրանայ կուռը և
բողոքող ժողովրդեան մը գոնէ բողոքի արտայայտիչը
լինելու: Թող որ ժողովրդի մեծամասնութիւնը այլևս
չունի նախկին հաւատքը կղերի նկատմամբ և իր ցեցերու
կարգը դասած է այդ պորտաբոյծերը:

Գաւառներու մէջ հարստահարութիւններ անվերջ կը
շարունակուին: Յունւարի 14-ին 130-ի չափ սպարկերտ-
ցիներ, 6-ը քահանայ, տուրքերու և բռնութիւններու
խստութիւններուն չգիմանալով գաղթած են Վաւաշ և
դիմած կաթողիկոսական փոխանորդ Արսէն վարդապետին
ճար մը գտնել իրենց ցաւերուն: 25 մէճիտիէ ծախսելով
4 օրինակ հեռագիր կը քաշեն Մապէյին պաշ. քեաթիպ
թահսին պէյի, եպարքոսին, ներքին գործոց նախարա-
րութեան և պատրիարքարան: Երեք անգամ ալ անձամբ
Արսէն կը հեռագրէ, բայց հեռագիրներ անպատասխանի
կը մնան: Ժողովուրդը ամիսէ մը աւելի է թափառական
և անպատասպար մնացած հայրենակիցներու ողորմու-
թեամբ կապրի, անդին իրենց եղբայրները և ընտանիք-
ները գահիճներու ձեռք մատնած: Բաղէշի կուսակա-
լութիւնը կերելի թէ Բ. Իրան հրահանգի համաձայն
հարցուցած է այս մասին Գարսուս (Խիզանի և Սպար-
կերտի դայմագամանիստ գիւլ) և իրեն քով կանչած է
Սպարկերտի միւտիւր-պէկերն, սակայն անոնք տեղերէն
անգամ շարժած չեն:

Սպարկերտ հայաբնակ գաւառ մըն է Վանայ ծովի
հարաւարեւելեան կողմը, Խիզանի դայմագամութեան
տակ: Այս գաւառի միւտիւրներն տեղական քիւրդ պէկեր
են, ինչպէս Շարիֆ խան պէկ, Քեարիմ խան պէկ, Սա-
տուլահ պէկ, ընտրւած փոփոխակի Խիզանի շէյխ Սէյտ
Ալիի ազդեցութեամբ: Կուսակալանիստ կեդրոններէ հեռի
այս գաւառը Կարկառ, Խիզան, Շնիձնը, Կեցան և ուրի

գաւառներու հետ բոլորովին Սէյա Ալիի կամայականութեան յանձնած են, և ոչ մի միւտի, գայմագամ կարող է պաշտօն վարել առանց անոր հաւանութեան, և տեղական բոլոր պէկերն անոր հըն կամակատարներն են: Սպարկերտի վերոյիշեալ պէկերն ամենայն խստութեամբ տուրքերն հաւաքելէ վերջ, կէսը կը յանձնեն կառավարութեան, իսկ մնացածը կիւրացնեն, իրենց ամբողջ վարուցանը, տներու շինութիւնը ևլն ևլն հայերը պէտք է կատարեն: Չմեռ ժամանակ հայեր պարտաւորւած են իրենց միջոցներով պահել անոնց բոլոր ոչխարներն, գայուներ նոյն թւով վերադարձնելու պայմանաւ: Եթէ ուէ արկածի, տարափոխիկ հիւանդութեան կամ բնական մահամբ կորուստ լինի, գիւղացին պարտաւոր է ոչխար գլուխ երկու մէծիտ վճարել: Աղջիկներու առեւանգում, կիներու բռնաբարութիւն քաջագործութիւններ են և անպատիժ կը շարունակին, ինչպէս ամէն գաւառ:

Թէև այս բոլոր հարստահարութիւններու բուն աղբիւրը Սէյա Ալին է, սակայն ժողովուրդը երբեք մտքէն անգամ չանցնէ: անոր դէմ բողոքելու, քանի որ բացարձակ վստահ է թէ կառավարութիւնը ուղէ իսկ, չէ կարող ոչ մի բան ընել անոր, իր վայելած ահագին ժողովրդականութեան պատճառաւ:

Կարկառ գաւառէն կը գրեն. «1901-ի դեկտ. 4-ին Սէյա Ալիի խօլամներէն Կոնգոս գիւղացի Դուժոյի լամուկ Հիւսէին վերաւորեց Հառլու գիւղէն Կարապետ Գաջօ-եանը, իսկ գեկա. 16-ին սպաննեց նոյն գիւղացի Սարգիսը: Բերդակ գիւղէն Մըրադօկի լամուկ Մըհմէ բռնութեամբ անկողնէն հանեց տարաւ Սըմբոն գիւղացի Խաջօի աղջիկ Մարգրիտ: Սոյն Մըհմէ և Լեռնեց գիւղի Իբրահիմ կը կողոպտեն Ս. Կարապետի փէհլիվանը: Սէյա Ալիի խօլամները ամիսն անգամ մը կուգան ամէն գիւղէն մէկ մէկ ոսկի կառնեն ու կերթան»...

Շատախէն կը գրեն 1902 փետրվ. 1 թւով. «Շատախի թաղի վաճառական համարւած դասակարգը իր վաշխառու ընթացքով ծանր բեռ մ'եղած է արհեստաւոր և երկրագործ ժողովրդեան վրէժ. զանազան ձեւերով զանոնք կողոպտելէ վերջ, իրենց բաժին զինուորական տուրքն, թէմէթիւն, օլամ ևլն ժողովրդեան վճարել կուտան, քանի որ իրենք են կառավարութեան հետ բաշխումներ ընողը:

«Կառավարութիւնը առանց մի փարս տալու չորս տարւան մէջ ժողովրդեան շինել տուաւ 24 ժամայ ճանապարհ. 500-է աւելի գերաններ տեղափոխել տուաւ ժողովրդեան ուսերու վրայ հեռաւոր տեղեր վան-Շատախի հեռագրաթելերու համար, դատարան մը շինեց 1,000 իսկիի արժէքով, բոլորովին ժողովրդեան միջոցներով:

«Տուրքեր բոլոր խստութեամբ կը հաւաքեն, ժողովուրդը անկարող իր օրապահիկը ճարելու ծեծի և չարչարանքներու տակ պարտք ընելով, իրենց ունեցածը ծախելով կաշխատին ազատիլ տանջանքներէ:

«Կարգ մը գաւառան հայեր ալ, որոնց անուններ իհարկին պիտի գրենք, ամէն ջանք կը թափեն ժողովուրդի բողոքի ձայնը կտրել տալու համար. իրենց օձի լիզով կը թունաւորեն ժողովրդեան միտքը և կ'անպատուն այն անձնակերներն, որոնք ազգի ազատութեան համար կը ճգնին:

«1901 մայիս 4-ին Եւթոնց գիւղի Մուսայ և Ռաշիտ

աղաներն նոյն գիւղացի Թադէոսը ձեռք ոտք կապելով ողջ ողջ կայրեն: 96-ի կոտորածներու ժամանակ այս տղայի հայրը Պետօ և իր եղբայրներն կըսպաննեն, իսկ ինքը Թադէոս վան փախչելով կազատի: Այս օրերը հայրենիք դառնալով կը տեսնէ որ Մուսայ իրենց տան ու արտերուն տիրացած է. իր պահանջման վրայ Մուսայ սպառնալիքներով կը վնասէ գիւղէն: Թադէոս կը դիմէ գայմագամին, որ գործը կը յանձնէ հարկւրապետ Խալիլի, կատարեալ սրիկա մը: Վերջինս կնքւած մի պաշտօնական նամակ կուտայ Թադէոսի ձեռք որ երթայ Մուսան Շատախ բերէ: Տղայի հազար ու մի աղաչանք ու պաղատանք անօգուտ կը լինին, վերջապէս ճարահատ կը դիմէ իրենց գիւղն, ուր և կը պատահի իր կենդանի այրիլն: Կառավարութիւնը ձեակերպութեան համար Մուսան և Ռաշիտը երեք ամսի չափ բանտարկեց, ապա ազատ թողուց: Այս Ռաշիտը դարձեալ նոյն գիւղացի Ռէս Մխօյի փորը պատռելով վառօդ կը լեցնէ ու կրակ տալով կը պայթնցնէ, ականջներն, քիթը, ամօթոյքը կարելէ և աչքերը հանելէ վերջ: Ասոնք ամէն տարի գիւղը կապալով կը վերցնեն աժան գնով և փոխանակ ըստ օրինի տասանորդը 7-էն 1 հաւաքելու, 4-էն մէկ կառնեն: Գիւղացիները յուսահատած են բողոքելէ...

«1991 հոկտ. 25-ին Սղերտ գաւառի պոչտանցի աշիրաթէն Մամիսուանցի կը յարձակին ասորաբնակ Կօրիճ և Արճկան գիւղերու վրայ և կը կողոպտեն անոնց ամբողջ ունեցածը, մինչև իսկ կահ կարասիներ: Ասորիներ կը դիմեն կառավարութեան, որ յարմար առիթ համարելով կըսկսի տուրք պահանջել, փոխանակ անոնց աւարը վերադարձնել աշխատելու:

«Ուրիշ մանր մունր հազարաւոր դէպքեր ևս կը պատահին, ամէն օր ամէն վայրկեան կը հանդիպիս մի ապօրինի ընթացքի, վայ անոր որ զգայուն սիրտ ունի»:

Կարճանի մէջ Հալաճ աշիրաթէն համիտի Եագուպ և իր եղբայր Ջաֆար աղաներն են որ կը կողոպտեն գաւառը: Ջաֆար աղայ վերջի 4 տարիներու ընթացքին մէջ երկու հայ կին բռնի կրօնափոխ ընել տուած է: Վերջերս ալ Սորբ գիւղէն Կուհարի Ղազարի նորահարսը Գինօն բռնի կը փախցնէ Փիքանց գիւղ և մահմէտականութիւն ընդունել տալով բռնի հետը կամուսնանայ: Հոս ևս տուրքերու ահագին խստութիւններ: Թիւրք և քիւրդ միշտ հետամուտ են հայուհիներ փախցնելու և խլամաղնելու. իրենց այս ընթացքին Սէյա Ալի մեծ մղում կուտայ:

II

27 մարտ

Վերջին նորութիւնն է քիւրդ-համիդիներու լարած էնթրիկները: Ասոնք միշտ լուրեր կը տարածեն, թէ ֆէդայիներ պիտի յարձակին սահմանագլխէն ներս, ասով կուգեն կառավարութիւնը ստիպել որ իրենց թէ նոր գէնք յանձնէ և թէ զօրք ղրկէ սահմանապահուիլ, որոնք իրենց օժանդակ կը լինին իրենց հակառակորդ ցեղերու դէմ: Այս համիդիներու գլխաւորներն են Շարաֆ պէյ, թաղ-ւորցիներու Հիւսէին պէյ և ուրիշներ: Արդէն այս երկուքը միշտ կառավարութեան օժանդակութեան կը դիմեն, երբ նեղ իյնան իրենց հակառակորդներէն: Անցեալ ամսուն Շարաֆ պէյ վեց քիւրդ (երկուքը քրտացած հայ) կը ղրկէ Պարսկաստան, որոնք ֆէդայիի պէս հագւած կը մտնեն Պաշտապայի սահմանը: Իրենց նպատակն էր կեղծ

կուլի մը մէջ սպաննել երկու քրդացած հայերն, որոնք թլպատած չէին և այդպիսով հաւատացնել ամէն կողմ թէ ֆէդայիներու նոր յարձակում եղած է: Միւս կողմէն 2-300-ի չափ քրդեր զինւած, արդէն պատրաստուած են եղեր Պաշգալէի վրայ յարձակել այդ կեղծ կուլի ժամանակ: Կեղծ ֆէդայիներու խումբը Պաշգալէի աւերակ բերդի վրայէն մէկ քանի հրացան կարձակեն, հարկապետ մը մէկ քանի զապթիէներով կը յարձակին անակնկալ անոնց վրայ, որոնք փախուստ կուտան, մէկ երկուքը կը ձերբակալին և գաղտնիքը երեւան կեցնէ: Միւս քրդեր կը ցրւին:

Անցեալ օր ալ Օրմանեան մի հեռագիր քաշած էր հոս:

Առաջնորդը մի շքաբերականով այդ հեռագիրը մօտակայ գիւղերու և քաղաքի եկեղեցիներու թաղ խորհուրդներուն ղրկեց: Վերջիններս թաղի երեւելիները կանչելով կարգացած և խրատած են զանոնք որ իրենց թաղերի մէջ եթէ փախստականներ գտնուին, անմիջապէս կառավարութեան ձեռք յանձնեն: Բաւական յուզում ընկաւ յեղափոխութեան հակառակորդներու մէջ. մի քիչ շարժեցան, հետամուտ եղան, սկսան ասպին անդին հաշիւ այս այն վախեցնել. տեսնենք վերջն ինչ կը լինի:

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Թ Ո Ւ Մ Ի Ց

10 մարտ 1902

Ցեղիս գործարանների մշակների մէջ մի խուլ իրարանցում էր սկսել մի քանի շաբաթ սրանից առաջ, որը գնալով աւելի և աւելի սուր կերպարանք ստացաւ: Մանթաշեանի գործարանի մշակների գործադուլը մի կերպ վերջացաւ, բայց միւս կողմից սկսեց միաժամանակ գործադուլ բոլոր գործարաններում: Կառավարութեան ձեռք առած բոլոր միջոցները ոչ մի հետեւանք չունեցան և վերջապէս երկու օր առաջ մօտ 500 մարդ բանտարկեցին, կարծելով որ այդ միջոցով մշակ դասակարգին կարելի է յետ կասեցնել, բայց ընդհակառակը՝ այդպիսով կառավարութիւնը աւելի ևս գրգռում է և աւելի համարձակ քայլերի տեղիք տալիս: Այս շարժումը չպէտք է դիտել իբրեւ պատահական մի երեւոյթ, այլ դա երկար ամիսների ընթացքում նախապատրաստուած մի գործ է, որ որոշ ծրագրով ու զարմանալի համարձակութեամբ առաջ է տանւում: 500 մարդու բանտարկութեան առիթով անցեալ օրը մի ահագին խումբ, մօտ 1,000 հոգուց բաղկացած, առանց ձայն հանելու՝ քաղաքի մի ծայրից, ուր հաւաքւել էր, օրը ցերեկով ճիշդ ժամը 12-ին եկաւ ու ոստիկանատան առաջը կտրեց: Ոստիկանութիւնը, իհարկէ, միայն յուզւած հանդիսատես էր լինում, արգելել, ուէ բռնի միջոցի դիմել չէր համարձակւում, զգալով, որ հետեւեալը աւելի վատ կը լինէր: Վերջապէս մի քառորդ ժամից յետոյ եկաւ նահանգապետի օգնականը, իջաւ կառքից և դարձաւ ամբոխին. ինչու էր հաւաքւել, ինչ էր ուզում, ասացէք ինչ է ձեր պահանջը և ինչ: Պատասխանը եղաւ. «կամ մեր ընկերներին արձակեցէք կամ մեզ էլ նրանց հետ բանտարկեցէք»: Նահանգապետի օգնականը աշխատեց, իհարկէ, ամէն կերպ համոզել, որ ցրւեն, բայց չեղաւ: Ամբոխը տեսնելով, որ իր առաջարկութիւնը չյարգւեց՝ ցոյցերով աղաղակներով և երգերով շարժւեց ձեպի բանտը, որ-

պէս զի ուժով ազատէ բանտարկւած ընկերներին, բայց որովհետեւ ոստիկանութիւնը այնտեղ արդէն պատրաստութիւն էր տեսել, մի կերպ յաջողեց հեռացնել ամբոխին բանտի մօտից:

Հետեւեալ օրը մի աւելի մեծ ամբոխ ուղղակի յարձակում է պահանջի վրայ, ուր բանտարկւած էին ընկերները և պահանջում է, որ կամ իրեն ևս բանտարկեն, կամ թէ ընկերներին ազատ արձակեն: Ահա այդ միջոցին դուրսը նահանգապետի օգնականի և մի քանի այլ աստիճանաւորների ներկայութեամբ մի-երկու զաւրկով սպանում է ամբոխից, ինչպէս ասում են, մօտ 30 մարդ և մօտ 50 մարդ էլ ծանր ու թեթեւ վիրաւորում: Քաղաքին տիրում է սարսափ: Բոլոր խառնութիւնները, կանտօրներն ու տները անմիջապէս փակւում են: Զօրքերը ցրւում են քաղաքի զանազան կէտերում, գիշերները փողոցներում շրջում են զինուորական պահակներ: Քաղաքը յայտարարւում է զինուորական դրութեան մէջ...

Մ Ա Յ Ի Ս Ե Ա Ն Տ Օ Ն Ը Բ Ա Գ Ի Ո Ւ Մ

5 մայիս 1902, Բագու.

Ապրիլի 21-ին Ռուսաստանի սօցիալ-դեմոկրատական կուսակցութեան տեղական կոմիտէն առաջին անգամ Բագուում կազմակերպեց քաղաքական մի ցոյց՝ ուղղւած տիրող միապետական ռէժիմի դէմ:

Կօմիտէն նախօրոք հրաւեր էր կարգացել՝ ռուսերէն ու հայերէն թերթիկներով՝ քաղաքիս բոլոր բնակիչներին, առաջարկելով նրանց՝ մի կողմը թողնել ազգայնական ու դասակարգային անհամաձայնութիւնները և միանալ այդ օրը՝ բոլորին ճնշող ռէժիմի դէմ կուլու համար:

2է կարելի ասել, թէ այդ կոչին արձագանք տւին բոլոր ազգերն ու դասակարգերը: Ցոյց անողների խումբը կազմում էին հայեր և ռուսներ. թիւրք բնաւ չկար: Այդպէս էլ սպասելի էր մի ժողովրդի կողմից, որ կուլու տուրապէս դեռ շատ ստոր է կանգնած: Մեր հարուստ դասակարգը ևս ամենեւին չէր մասնակցում ցոյցին: Ինտելիգենտների շատ սակաւաթիւ էին: Հրապարակ նետւած ցոյց անողները գրեթէ բացառապէս բանւորներ էին, որոնք նշանակւած ժամին (կիրակի, ժամը 12-ին) աներկիւղ բարձրացրին կարմիր դրօշակը և՝ յիշող կորչի՝ միապետութիւնը՝ աղաղակներով առաջ ընթացան: Ցոյցը սկսեց հայոց եկեղեցու մօտից և շարունակեց նրա առջև ձգող լայն հրապարակի (պարապետ) ամբողջ տարածութեան վրայ. բանւորները այդտեղ երգելով ու աղաղակելով պտոյտ էին գործում, յետ մղելով ոստիկաններին, որոնք փորձում էին արգելել նրանց ընթացքը:

Կէս ժամ չանցած՝ վրայ հասան կոզակները նահանգապետի ու ոստիկանապետի ուղեկցութեամբ: Իրարանցում: Կոզակները հետամուտ եղան բանւորներին, որոնք խուռն բազմութեամբ դիմեցին դէպի Տօրգօվայա կոչւած փողոցը: Այդտեղ նրանց միացան բանւորական ուրիշ խմբեր, որոնք եկել էին Բայախանուց: Այդտեղ բանւորների թիւը հասաւ մի քանի հարիւրի և ցոյցը աւելի լայն ծաւալ ընդունեց: Ցոյց անողները խումբ-խումբ ցրւեցին Գիմնազիստկայա, Տատարսկայա և ուրիշ փողոցներով, միշտ աւելի և աւելի ժողովուրդ գրաւելով և

ապա միացան Բագիրովսկի սկզբերի մօտ: Այդտեղ մի անգամ
ևս պարզեցին կարմիր դրօշը և ապա ցրեցին իրենց տները:

Կողակները՝ գլուխները կորցրած՝ այս ու այն կողմն
էին սլանում, հրհրելով անմեղ, անմասնակից ամբոխին,
որը սոսկ հետաքրքիր ականատես էր: Ժամը 2-ին մօտ եկաւ
և հրշէջների խումբը, թէ ինչի համար — Աստուած գիտէ:

Տեղի ունեցան մի քանի փոքրիկ ընդհարումներ՝ բան-
ւորների և ոստիկանների միջև. վերջիններս դադանակի
բազմաթիւ հարածներ ստացան: Ուշագրութեան արժանի
է, որ ոչ դրօշակը կարողացան խելի և ոչ դրօշակակիրը
կարողացան ձերբակալել: Մինչև այսօր էլ նա ազատ է:
Պարապետի վրայ և փողոցներում ոստիկանները աջո-
ղեցին միայն մէկ մարդ ձերբակալել: Բայց ժամը 4-ից
արդէն սկսեցին գործել ժանդարմները, և երկու օրւայ
ընթացքում ոստիկանութեան աջակցութեամբ ձերբա-
կալեցին 30-32 հոգի ևս: Բանտարկւածների մէջ են
սրիորդ Գօրկիովա (ռուս), օր. Բարիկեանց, ուսանող Լ.
Բ. և Տ. Գնունեանցներ, Բէկզադեանց, Մէլիք-Յոսէփեան,
ծառայող Կոզարենկօ և մի գիմնազիստ՝ Ստեփան Նաւ-
դարեանց: Մնացածները բանւորներ են, որոնց՝ գաղտ-
նիքներ կորցելու նպատակով՝ կառավարութիւնը ենթար-
կում է ծեծի և ուրիշ բռնութիւնների:

Այս ցոյցը, իբրև առաջինը, գիտում են ընդհան-
րապէս աջող ժողովուրդը իր մեծամասնութեամբ չէր
ըմբռնում իհարկէ ցոյցի բուն նպատակը: Թիւրքերը,
օրինակ, կարծում էին, թէ «բունթ» սարքողը հայերն
են, որոնք իբր թէ ուզում էին կոտորել թիւրքերին:
Այդ պատճառով նրանք խանութները փակել և առը-
ճանակներով զինւած՝ պաշտպանողական դիրք էին բռնել:
Առհասարակ այս ցոյցը հայերին են վերագրում ոչ միայն
սամիկ ժողովուրդը, այլ և պաշտօնական շրջանները:

Մինչդեռ, պետք է նկատել, որ տեղիս սօցիալ-դեմո-
կրատական կոմիտէն ուղղակի թշնամական դիրք է բռնած
դէպի Տաճկահայաստանի դատին նւիրւած բոլոր հայ
յեղափոխական ու համակիր ուժերը և նոյնիսկ դէպի
այն հայերը, որոնք համակրելով հանդերձ ներկայ շար-
ժումին Ռուսաստանում, չեն մոռանում գնել միաժա-
մանակ և զուտ ազգայնական պահանջներ, ինկատի ունե-
նալով, որ մի ընդհանուր սահմանադրական կառավա-
րութիւն, որպիսին պահանջում է ռուսական Սօցիալ-
դեմօկրատիան, գեռ ևս չի երաշխաւորում մանր ազ-
գութիւնների ազատ ու ինքնուրոյն զարգացումը: Ռուս
Սօցիալ-դեմօկրատիայի բռնած այդ դիրքը կը նպաստէ
այն հանգամանքին, որ կովկասում և մասնաւորապէս
հայերի մէջ կըստեղծւի մի առանձին կուսակցութիւն,
որի նպատակը կը լինի հետապնդել կովկասեան ազ-
գութիւնների ինքնուրոյնութեան: Եթէ այդպիսի մի կու-
սակցութիւն մինչև օրս առաջ չի եկել, դրա գլխաւոր
պատճառներից մէկն էլ, անտարակոյս, տաճկահայոց շար-
ժումն է, որ վաղուց ի վեր կլանում է կովկասահայ
յեղափոխական ուժերի մեծագոյն մասը:

կամ դէպք մը տեղի կունենայ, արտասահմանի հայու-
թեան մէջ յուզում մը և մեծ իրարանցում մը առաջ
կուգայ և ընդհանուրին ուշադրութիւնը կ'ուղղւի դէպի
երկիրը և յեղափոխական գործը: Մինչև անգամ այն
թմրած ուղեղները ու տկարացած սրտերը, որոնք երկար
ժամանակ լուռ ու անտարբեր կը մնային յեղափոխական
քարոզներուն, և սկեպտիկ շարժումներով կը պատաս-
խանէին իրենց եղած դիմումներուն՝ կատարւած հերո-
սական իրողութեանց առջև յեղակարծօրէն կը ցնցին
և վարկենական խանդավառութիւնով մը կը լեցան,
անշուշտ մերձաւոր շողջողուն, յաջող ազատագրութեան
մը յոյսերով գինովցած:

Բայց շատ կարճ կը տևէ ոգևորութեան այս շրջանը,
ու յաջողութեան օրերուն երբ կը յաջորդեն գծախ-
տութիւնները, երբ մեր հարցը գիւտագիտական ձա-
խողւած մը կը կրէ և կամ երկրի մէջն ու զուրսը
յեղափոխական զեղծում մը նշմարւի, կը դադրին, կը
մարին այդ վարկենական խանդոտ ծափերը, երկրի ներսը
նպաստ հասցնելու փոթկոտութիւնը ու նորէն երկրի
մէջ գործիչն ու գործը մինակ կը մնան իրենց անագոյն
թշնամին և անհամար դժւարութիւններու հետ:

Եւ ինչ որ աւելի գէշն է, այդ քաջալերող, նպաստող
կարճատև շրջանին կը յաջորդեն անվստահութեան
ցաւագար ցոյցեր, հայհոյութեանց կոյր, յիմար, արշա-
ւանքներ:

Ասի սովորական առաձիգ երևոյթ մըն է և բնական
դարձած մեր յեղափոխական թէև կարճ, բայց տաժա-
նելի շրջանին համար:

Պէտք կ'այ որ այս ըսածներս հաստատելու համար
գիմեմ փաստերու, դեռ շատ մօտիկ է մեր անցեալ
տասնամեակը: Ամէն ոք ծանօթ է մեր յեղափոխական
անցեալ գործառնութեանց և ուզող կրնայ ինքնին թիթե
ակնարկ մը նետել անոնց վրայ ու համոզւիլ, եթէ երբեք
հարկ կայ, տասնեակ թերթեր ունինք արտասահմանի
հայութեան մէջ, որոնք իրենց կարճ ու երկար կեանքին
մէջ իբրև հայելի անկեղծօրէն կը ցոլացնեն մեր ժողո-
վորդի այդ բնորոշ ոգին և միշտ երէկի պաշտօնածը
այրւած է յաջորդ օրը:

Առանց հոգեբանական վերլուծութեանց գիմելու,
գտնելու համար միկրոնները մեր ժողովրդի փոփոխա-
մտութեան, անոր հայրենասիրական խանդին բարեխառ-
նութեան արագ ելքէջին, կ'արձանագրենք միայն տխուր
երևոյթը, որ իր առաձգական բնաւորութեամբ կը թու-
նաւորէ գործին սրբութիւնը և կը խանգարէ անոր յա-
րատե յառաջդիմութիւնը:

Մենք երկրի մէջ գտնւողներս երբեք վախ չունինք
արտասահմանի հայ գրչակներէն. մէկ նպատակ միայն
ունինք, այն է՝ որ առաջ վերջ մը տալ հայ ազգի կրած
անլուր տառապանքներուն և տեսնել զանի ազատութեան
ճամբուն վրայ:

Թող գրեն ատոնք, թող իրարու միս ուտեն...

Ամէն բանէ առաջ մենք պէտք ունինք ժողովուրդին,
հայ ազգի ամբողջութեան, անոր նիւթական և բարոյական
օժանդակութեան, յաջողելու համար մեր նպատակին մէջ:

Հոս հայրենիքին մէջ ժողովուրդին հետ ենք միշտ.
ան բացարձակ հաւատք և վստահութիւն ունի մեր վրայ.
Իրաւ է, երբեմն ան ալ ցաւի, զայրոյթի վայրկեաններ
կունենայ մեզի գէժ, իր ցաւագին օրերուն մէջ, բայց երբ
կը տեսնէ մեր թափած քրտինքը և արիւնը, երբ մի քիչ

Գ Ր Օ Շ Վ Կ Ո Ղ Ն Ո Ս Բ

(ՄԻ ՁԱՅՆ ՎԱՍՊՈՒՐԱՎԱՆՈՅ)

26 մարտ 1902

Ամէն անգամ որ երկրի մէջ ունէ կէտի մը վրայ
յեղափոխական կարևոր ձեռնարկ մը կը կատարուի, և

մը թօթուէ իր վրայէն վտանգին պատճառած սարսափները, կը գտնէ շուտով ինքզինքը և նորէն կը միանայ մեզի հետ:

Անոնք որ չեն համակերպիր կամ հաւնիր ներկայ գործունէութեան եղանակին, անոնք որ ունին աւելի լայն և օգտաշատ ծրագիրներ, և օժտւած են բարձրագոյն կարողութիւններով և անկեղծօրէն փափագ ունին հայրենիքի դատին ծառայելու, թող վազեն երկիր: Մենք հոս պատրաստ ենք գրկաբաց ընդունելու զիրենք և ձեռք ձեռքի տւած համերաշխ գործելու: Թող գան, արդէն երկրին մէջ ահագին պահանջ կայ ձեռնհաս, դարգացած և համբերատար գործիչներու:

Հայկական այս ճգնաժամուն, օրհասական այս րոպէներուն մէջ, երբ տաճկական ժասնակի կոտորածները, քրդական աւարառութիւններն և ասոնցմէ պատճառած հայ ժողովուրդին գաղթումները և բարոյապէս անկումը աստիճանաբար հայկական հարցը կը սպառնան խեղդել ցեղին վերջնական հատնումին մէջ, յեղափոխական գործունէութիւնը միակ կենսարար կրակն է, որ կ'երկնայ, կը ճիւղաւորուի հայութեան մէջ և կը պահպանէ զանի վերահաս վտանգէն...

Հերիք է՝ մեր անմահ նախորդները, ժասնակի, հակիրճ ուժերով զինւած՝ զոհ տւին իրենց անգին կեանքը, հերիք է հայրենիքի հայութիւնը մատաղ տւաւ իր մատաղահաս կոյսերը և անտիական պատանեկութիւնը, ալ հերիք են մեր քաջածանրութիւնը տուայտանքները, եկէք զօրավիգ եղէք մեզի, կեցէք մեր կոնակը և կամ անցէք մեր առաջը, զինեցէք մեր զինւորներու դարտակ ձեռքերը ու միասին միասիրտ մղենք վճռական կռիւը մոլեգին ու յամառ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Պ Ի Ր

1902 ՎԵՍՏՆԻԿԱՅ 1 Աղթամար

Ամենապատիւ Տ. Մ. սրբազան Արքեպիսկոպոս

Ազգախնամ պատրիարք հայոց Թիւրքիոյ

Ի Վ. Պօլիս

Հինգ օր առաջ 64 նօմբօ հեռագրաւ յայտնած ենք Ամենապատիւ Հայրութեանդ Սպարկերտ գաւառի 25 հայ գիւղերու, 2 վանքերու քահանայից և ժողովուրդեան կաթողիկոսարանս դիմելը. ներկայիս պէտք համարեցի մասնաւոր տեղեկութիւն մը տալ այն հարստահարութեանց վրայ, որոնցմով այս թշուառ ժողովուրդը հարկադրւած է ձմեռւան այս ցրտաշունչ սառնամանեաց և ըննային ճամբորդութեան մ'ա հաբեր դժւարութեանց ենթարկուիլ իր ընտանիք և զաւակներ զիրենք յափշտակող գազանաց ճիրաններուն մէջ թողուլ և Գիմել այլուր մուրալու, տառապելու իր պէս թշուառ սնանկացած ազգակիցներու դռներ, կրելու այս պայմաններուն բնական, ծանօթ ներութիւններ, լալու և բողոքելու իր աննկարագրելի վիշտերը:

Սրբազան հայր, Գիւրին է երեւակայել մեր ալ մտքի և կարողութեան տկարանալն ի տես այսպէս աղէկաւոր տեսարաններու, զի կը վարանինք և չենք գիտեր ասոնց վիճակի ո՞ր մէկ մասն հաղորդենք Ձերդ բարձրաշնորհ հայրութեան, միայն քանի մը նմոյշներ և օրինակներ թւենք որ գաղափար մը տան ընդհանուր հարստահար-

րութեանց և իրենց առօրեայ կեանքին, որմէ մահը աւելի նախնարելի և արգիւնքն է:

Ա) Նորն գաւառի միւտիրը բնիկ քիւրդ մ'է ևս որով կառավարական ուժը միացած կը լինի քրդական ազդեցութեան, և այս կրկնակ զօրութիւնն է մայր ամէն անյսելի չարեաց ու կեղեքմանց և որով այս դրախտանման գաւառն ալ օր աւուր կը դատարկանայ հայ բնակչութենէ:

Բ) Այս քիւրդ միւտիր Գէրիմ պէյէն (ընդհանուր կեղեքիչ) իզատ կան նաեւ շատ մը պէյեր, յորս միւտիրին մրցակից են Շարաֆ խան և Սադուլաֆ խան պէյեր և այլքն, որոնք իբրեւ զատ իշխանութիւնք կը տիրեն զանազան գիւղերու և իբրեւ միւտիրին ցեղակիցներ ու համագոր պետեր առանձնաշնորհեալ են ընել ինչ որ ուզեն: Տուրք հաւաքելու համար ամէն մէկ պէյ իր խօլամներով իր ազդեցութեան տակ եղած գիւղեր կը խուժէ իբրեւ ոստիկանապետ, միւտիր և ամենայն ինչ, ու քստմնելի տանջանքներով կը գանձեն տուրք. ժողովուրդի կենսական պէտքն, ոգեպահիկն հանելով, և իրիւ վարձք իրենց բարբարոսութեան, հաւաքածին մեծ մասը գրպանելէ յետոյ, մնացեալը անւանական միւտիրութեան սնտուկին կը տանին, առանց հաշիւ մը նշանակելու. այնպէս որ այս գաւառի բնակիչներ չեն կրնար գիտնալ թէ ի՞նչ է տարեկան տրոց օրինաւոր գումար, ի՞նչ են վճարած և ի՞նչ պարտին:

Գ) Իւրաքանչիւր պէյ ամէն մէկ եղանակին յատուկ եղող գործերով կ'աշխատեն իր հպատակ գիւղի ժողովուրդ իրենց ցամաք հացերով և այսպէս ամէն մարդ ժամանակ չունենար իր գործերը ընելու, միշտ զբաղւած լինելով անգութ պէյին անհատնում օղանքով, զուպարանքով և ստրկական ծառայութիւններով:

Դ) Պէյեր իրենց բազմութիւ ոչխարներ կը ցրեն հայերուն վրայ սնուցանելու և խնամելու ամբողջ ձմեռ:

Ե) Պէյեր այս հայ գիւղերէն ազատ են առնել և կառնեն ինչ և որչափ որ իրենք ուզեն. հայեր իբրեւ ստացւածք ժառանգ կը թողուն իրենց որդոց և դրամով կը ծախեն իրարու. իրենց կը համարին հայու կեանքն ու ամէն ստացւածք. աշխատութեան արգիւնքն, կինն ու աղջիկն, և եթէ անոր կեանքը և անոր քրտինքն մասնաւոր բաժին մը, տգիղ կին մը և ըն թողուն անոր հայուն՝ այն ևս շնորհք կը հաշին և այնպէս կը հասկցնեն:

Այս խժդգութեան քանի մը օրինակներ: Հիւղանդ գիւղէն Շարաֆ խանի խօլամ Փերէն անցեալ տարի, ըստ նախնի սովորութեան, երեք ջորաբեռ ցորեն, 2 թօփ շաւ, 8 զոյգ գուլպայ և իւրաքանչիւր ամուսնութեան մէկ մէծիտ տուրք առած է:

Աւերին Հուրուկ գիւղէն կը շալ խարզօն տարւէ տարի 7 արասի չափ ցորեան, ձեռք մը զգեստ, զոյգ մը սօլ, 10 զոյգ գուլպայ, իւրաքանչիւր աղջիկ տանելուն մէկ մէծիտ տուրք կառնէ ու տեղացիներու 150 ոչխար և եզ մը տանել կուտայ այս անցեալ աշուն:

Աւերին Կոտենց գիւղէն Շարաֆ խան պէյ 9 չափ ցորեն, կօշիկ, տարբեր ուտելիքներ ամէն տարի առել է, ուրիշ տեղեր աշխատելու գացող մէն մի վերադարձողէն մէկ ոսկի, գլուխ մը շաքար կառնէ. թէ և ոսկի մը միայն լինի իր կարճ պանդխտութեան վաստակն:

Ճաժման գիւղէն՝ Գէրիմ խան պէյ տարին 12 չափ ցորեն, 100 զոյգ, դրամ, կօշիկ և հանդերձ, պանդխտու-

Թե՛նէ վերադարձողներէն ըստ վերնոյն կառնէ: 1901-ին Մարտոյի կին Փէրօն բռնի յափշտակեց:

Աւելար գիւղէն Թէմուր և Քէրիմ խան պէյեր 6 չափ ցորեն, պանդուխտներէն նոյնպէս առին, 110 ոչխար տարին հովին ալ սպաննեցին և 20 չափ ցորեն արտին մէջ վառեցին:

Բաղինից գիւղէն Խուրշիտ պէյ նոյն գիւղի սեփական ընդարձակ դաշտավայր և գաղթողներու կալածանք ամբողջապէս գրաւած է:

Ներքին Վոտենց, ուր 3 տուն միայն հայ մնացեր են, յետին ծայր Թշառ, Հարաֆ խան պէյ տարին 4 չափ ցորեն, 60 զրշ, հանդերձ և կօշիկ կառնէ:

Ներքին ուր մէկ տուն մնացեր է, Հարաֆ խան պէյ և Վրշայ Ապտօն տարին 3 չափ ցորեն, 20 զրշ, կօշիկ և այլն առեր են:

Տալարս՝ Վրշեցի Վայսօն հայ կին մը կրօնափոխ ընելով առեր և այդ տան բոլոր կալածանք գրաւեր է. ուրիշ տուն մը այրերէ այս աշնան, ուրիշ 2 տուններ հալածեր է և նոքա գաղթած են: Հարկին գիւղէն Քէրիմ և Հարաֆ խան պէյերը կառավարական տուրք հաւաքած տան Տօսուէն և Տալարսէն հինգական մէծիտ, ուրիշ գիւղերէն նոյն համեմատութեամբ, համագումար 32 ոսկի կաշառք առած են, նազ բարբարոսութիւն ընելու խոստմամբ: Մնացեալ գիւղերուն ալ հարստահարութիւններ այսպէս են, զորս մի ըստ միովէ գրել երկար պիտի ըլլար: Ահա Ս. Հայր այս զօնդակ կացութենէն ստիպեալ, գաւառէն 200 հոգի Գաւաշ և Սաս մըն ալ Մոկս մնացած կը Թափառին, որոնց բոլոր խնդիրքն է ունենալ օսմանցի դպրոցական, բարեկիրթ միւստի մը ու այսպէս ազատելով քրդական անտանելի ազգեցութիւններէ վայելեն օսմ. մեծագոր կայսեր հովանիքն ու պաշտպանութիւն, առ այս Թէ և շատ անգամ դիմում եղած է կուսակալութեանց, բայց միշտ ապարդիւն և ուստի այս անգամ դիմումներ ուղղուեցան Բ. դրան և ներկայիս ալ նորէն 2եր ազգախնամ հայրութեանդ որ բարեհաճիք ի սէր Աստուծոյ դարման մը շնորհել այս անժոռնջ զուարակ ժողովոգեան, որով կարենան իրենց տեղեր հաստատուիլ ազգութենի ընելու Օգոստ. Վայսեր կենաց և 2եր Ամեն. Հայրութեան:

Կաթ. տեղապահ տանն Աղթամարայ ԱՐՄԵՆ վարդապետ

ՇՐՋԱԿԱՆՆԵՐԷՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՍՈՑ

ԽՆԴՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԱՄՓՈՓՈՒՄԸ

28 օգոստոս 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Նւաստա՝ Ա. գիւղի էն բարեկեցիկ եւ երեւելի գերդաստանի շառուիղներէն ըլլալով, ժամանակի գծնդակ պարագայից եւ քիւրդ աղանդու հարստահարութեանց ու կեղեքումներու բերմամբ, զրկուցայ ամբողջ հարստութենէս, ընկան կենդանիներէս, մեծաքանակ արմուրք-էներէս ու ճոխ կահ-կարասիներէս: Մեր գիւղին աղան՝ Ս. Պ. անյապ տղուկի պէս քամեղով հարստութիւնս ու արիւնս, քայքայից ընտանեկան չէն օճախս Միջին դարու աւատականութեան զրոյթեամբ զիս իրեն գերի եւ սարուկ դարձնելու նենգամտութեամբ հայէս զրկեց և յետոյ իրս այն թէ, ի գութ շարժեալ իմ վրաս, 500 զրշ-ի փոխառութիւն ըրաւ ինծի քարեստարար (°):

Հաղիւ երկու տարի անդնելուն՝ իր պահանջն 1,200 զրշ-ի բարձրացուց, եւ որովհետեւ իմ կարօտութիւնս ծանօթ էր իրեն, հիմակ իմ ընտանիքս գրաւի տակ առած, զիս ոպանել տալու դիտաւորութիւն ունի, 150 ոսկույ արժողութեամբ հողակալածներս գրաւելու եւ 16 տարեկան սիրունիկ ու մատղաշ աղջիկս խայամայնելու եւ իր պսգշտո կրից ծառայեցնելու վատ դիտաւոր: Ի սէր Աստուծոյ, շնորհք ըրէք միջոց մը ցոյց տալ ինծի, որով կարողանամ աղատել ընտանիքս, պատիւս, աղջիկս վատ գաղանին ճիրաններէն:

Համբուրելով Ձեր Ս. աջն

Խոնարհ ծառայ

Գ... 7 նոյ. 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Ճաւ ի սիրա կը յայտնեմ Ձեր Գերապատութեան թէ, Ձ-ի դայրագամն իր քննական պտոյտին առթիւ Ռ. հանդիպելուն՝ հոգիէ ծանուցած է մեզ 15 օսմ. ոսկի պատրաստել եւ դիտէք, իրս տուրք: Պահանջւած 15 ոսկիի 5-6 ոսկին մեր մօտակայ աւերակի մը կալածական տուրքն է, իսկ մնացեալն մեր գիւղէն տարիներ առաջ, աղքատութեան պատճառաւ գաղթող-հեռացողներու պարտքն: Վերոյիշեալ աւերակին մեծ մասը տալինք է ի վեր կը հերկեն ու կը ցանեն Պ. դաւառակէն 2-3 մահմէդական աղաներ, վախէն չենք կրնար խնայել կառավարութեան որ տուրքն աղաներէն գանձել ըստ օրինի: Բայց օրէնքին մտիկ ընողը ո՞վ, երբ դալթոններու պարտքն ալ մեզնէ կը պահանջի օրէնքի պաշտօնեաներու կողմէ: Ճարտահատեալ մեր անյաւախն սիրմապուն եւ տան պաշարներն ծախելով պիտի վճարենք մեզնէ պահանջւած 15 ոսկին եւ զի զը լքանելով պիտի յորինք ի խնդիր հայրի Սրբօք կարիքի չէ թ ա գ-ր ի ի ու վ մը զայնպաւ պէյին բարեկիրտութեան ու խղճին կոչում ընել:

Համբուրելով Ձեր Ս. աջն

Մեծ խոնարհ ծառայ

Գիւղապետ Գ.-ի

Պ... 11 նոյ. 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Ստորագրեալք՝ Պ. գաւառակի աղգայներէն ըլլալով, կը փութանք հետեւեալ խնդիրն Ձեր ուշադրութեան յանձնել:

Գրամատոյց Ս. Կ. աղգայինին դեռատի կինը սեպտ. 15-ին իւ. աշիւթէն (Ռ.-ի եօթն տոնայիններէն մին) Բ. գիւղի Ռ. անուն քիւրդի մը կողմէ կ'առեւանդուի կինը երկու ամսէ իվեր Ձ-ու շէյի Ս.-ին իհրամոյր տարած է: Ս. իր ամբողջ ինչքն ու ստացւածքն, իր 12,500 զրշ. կաշառելով, կառավարութեան կը զիմէ, անօգուտ: Աշիւթէններու զիտադրներուն, շէյիներուն կը զիմէ, բայց ի գերեւ կ'ենեն իր ճիւզն ու աշխատանք եւ ամէն զոհողութիւն:

Եւ այսօրան օրս օրան սեւ հացի կարօտ, անպատար մնալով, Ձեր գերապատութեան կը յանձնարարենք զայն, որ պէտք եղած օգնութիւնն ընծեռէք նա եւ մօտակայ քաղաք մը զրկէք, ապահովելով իր կեանքն, որ այլեւս վառնի տակ է մեր գաւառակին մէջ:

Համբուրելով Ձեր Ս. աջն

Պ.-ի գիւղապետ Ե.-ի գիւղապետ Պ.-ի գիւղապետ

Պ. քահանայ

Ռ... 18 նոյ. 1901

Գերապատիւ Ս. Հայր,

Ձեր գերապատութեան ծանօթ է արդէն չըլակայք:

դան աղ Ք. Երան եւ ի մտանալորի Բ. աշխրթին պետ՝ Պ. Ին եզրորն՝ Ճ. Ին մեզ քրած բռնութիւններուն եւ հարստահարութիւններուն երեսէն մեր քաջած ստաւ պանքներն եւ մեր արդի պաւարի ու գաւն կայտ թիւնք։ Անցեալները Պ. Ի. Ա. պէկին հրամանին վրայ Չ. զայցինք, յիշեալ երկու աղա եղբայրներու մասին ստոյգ վկայութիւն տալու համար Բայց կառավարութեան թող ու ձեռակամ ձեռնարկներուն ամուլ եւ ապարգիւն վիճակին վրայ քաջապէս համուրած ըլլալով, սչինչ պատասխանեցինք, ապապայ փորձանքէ մը ազատ մնալու համար Աղաներն հզօրագոյն են քան պատասխարութիւն։

Այսօր եւս փոխ Ռ. Էֆ. ինչորն իրական ու ճշգրիտ գոյներովը ստուգելու համար Ռ. եկած է, պէտք եղած հարցապնդումներն ընելով։ Բայց եկող տեսնելով Ռ. Էֆ. իր կեանքն վառնդի տակ չգնելու համար, Ռ. գալէն առաջ, ինչորն առարկայ եղող երկու եղբայրներու՝ իրենց պիւղերու մէջ կ'այցելէ եւ երկուքն ալ հետն միասին տանելով գիւղէ գիւղ կը պտտի հարցաքննութեան։ Այնչոյն կրնայ մակարեւիլ թէ, ոչ թէ միայն Ռ. Ի ալեւ ամուլ Չ. Ի գաւառակին մէջ չպիտի գտնուէ հայ մը, որ յանդգնի այս երկու բռնաւորներուն աննպաստ վկայութիւն մը տալ, իրենց ներկայութեամբ մանաւանդ, քանի որ, բերան բանալուն հետ, խանչէրի հարաւուն ալ մէկ պիտի ըլլայ անտարակոյս Անցեալ ամառ յիշեալ բռնակալին (Պ. Ին) Ա. ցի Օ. Ին հետ ունեցած ընդհարումներուն ատեն, ստորագրեալներէն՝ Մ. Մ. Ղ. Եանի մէկ մատակ ձին եւ ջորի մը փախուցած ըլլալու ինչորն միայն Ա. պէկին բացած ենք եւ ուրիշ ոչինչ։ Բացարձակապէս մեր ասն ու որն բացատրելու կամ պարզելու անկարող կը գտնուինք եւ պիտի գտնուինք, յորչափ ասոնք (աղաներն) սանձարձակ եւ չձերբակալուած ըլլան ու մնան։

Ա՛րդ Ս. Հա՛յր, կառավարական ձեռնարկներէն (աղաներն ձերբակալելու մասին) բողոքովին յուսակաւոր եղած՝ Ձեր Գերապատուութեան կը գիմնեք, թախանձապէս խրնդրելով որ բարեհաճեք մեր այժմու դաւն ու պաւարի կայտութեան արձագանքն ըլլալ Ամեն. Սրբ. Պատրիարքի տէր եւ Կեդր. Պատկ. Ժողովոյն, որոնցմէ միայն յիշեալ աղաներու ձերբակալութիւն կը ինչորնք ու կը յուսանք տեսնագին։ Գաւառակիս ազգայիններու հանգստութեան համար կարելին ընելու ճիգ ու ջանքն ինչորնք Ձեր Գերապատուութեանէ

Մնամք խոնարհ ծառայք։

Տ. ցի	Ռ. ցի	Հ. ցի
Գ. Օ.	Օ. Մ.	Մ. Գ.

(Կնիքներ)

Օ Ր Մ Ա Ն Ե Ա Ն Ի Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը

Պ. Ա. Ն. Ի Հ Ա Յ Ո Ց Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ Ի Ն

Կիմանանք որ օսմանեան սահմանադրի գծին վրայ հայ խոռվարաններու շարժումներ կան, ուստի զգուշացուցէք կանխաւ մեր խաղաղասէր ժողովուրդին այդ բախտախնդիր խոռվարաններէն եւ յայտարարեցէք որ սոյն վնասակար գործեր ձեր շահերուն եւ գաղափարներուն դէմ են։

1902 մարտ 16


Պատրիարք

Մարգարիտ

Կ Ե Ն Ս Ա Գ Ի Ր Ա Կ Ա Ն

Ն Ա Չ Ի Կ Ա Ս Լ Ա Ն Ե Ա Ն

(ԿՈՐԻԻՆ, ՏԻԳՐԱՆ, ԱՆՏՕՆ)



1878—1901

Նահատակուած 1901 թ. յուլիսին յայտնի ընդհարումի մէջ, որ տեղի ունեցաւ Աղբիւնուազօրի մօտ հայ-մակեդոնական խմբի եւ տաճիկ զօրքի միջեւ։

Ոչ ոք չէր յուսար որ թիւրք շրջանի մէջ մեծացած, թիւրքերի թաղերին մէջ բնակած եւ ընդհանրապէս թրքաւէր ճանաչուած սափրիչ Ստեփանի որդին, կարող էր երբեքից կատաղի յեղափոխական դառնալ, բայց թիւրքիսն այդ տենդային ու հիւանդ երկիրը այդպիսի անակնկալների մի ճոխ խառնարան է. երեկւայ անտարբերը այսօր թունդ գործիչ է դառնում, թրքաւէրը՝ ազգաւէր, յեղափոխականը մատնիչ, լքտեսը յեղափոխական, որոնք գոյութեան կուր մէջ միշտ իրարու հրահրելով առանձին կրակ են տալիս յեղափոխական Ո գ ու Ն, որը առկայծում ու թափանցում է ամենաանձանթ, ամենամուլ ձեռքներն իսկ։

Այդ ջերմ Ոգին էր որ Խաչիկին 14 տարեկան հասակում բերաւ միացուց իր հասակակիցների խմբակին. յեղափոխական կատաղի ոգին էր, որ երբ 1895 թ. Ի օգոստոսին Տրապիզոնի կոմիտէն խմբերին առաջադրեց

կոտորածների «կծմար» Զաքի փաշային դիմաւորել գնդակներով, գուրս բերաւ Միսակին և Խաչիկին իբրեւ տէնօրիստների: Աճիւրդ պիտի գործադրէր սուլթանի պահակաւորութեան տարեգարձի գիշերը, բայց կարգադրիչ խումբը ինկատի ունենալով որ քրիստոնեայ երկսեռ հասարակութիւնը մեծ մազմուլեամբ զբօսնելու է գուրս գալիս, իսկ թիւրք խուփանը զինւած ու գրգռւած է լինում՝ նոյն գիշերը, վերջին րոպէին, կոմիտէի առաջ ամեն պատասխանատուութիւն յանձն առնելով՝ չգործադրեց վճիռը, միւս օրւան յետաձգելով: Զաքի փաշա առաւօտ շատ կանուխ մեկնեցաւ, կորիւնները անհամբերութիւնից կատաղել էին, կռքով սրացան ետեւից մինչև Ցէյրի-մէնտէրէ, անկարող եղան հասնիլ:

Մի ամբողջ տարի էր անցել Սասունի կոտորածից հայկական խնդիրը սկսել էր մոռացւիլ, եւրօպական դիպլոմատիան մաս մասի չէր խփում... Մինչդեռ Հայաստանի մէջ չարագործութիւնները չէին դադարում, եղբունագործ փաշաները նորանոր շքանշաններով ծանրաբեռնւած՝ փառաւոր շրջագայութիւններ էին կատարում Պօլսից գաւառ, գաւառներից Պօլիս, երազուն, յուսալից հայութիւնը հիասթափուած, անհամբերութիւնից ֆըշ-ֆըշում էր. ունէ գործով բողոք յայտնելու պահանջը ընդհանուր էր. Զաքի փաշան նոր խուսափել էր, երբ Տրապիզոն հասաւ Աւանի արիւնաբոս Բահրի փաշան, ահագին հարեմով, խրոխտ ու սեգ. հարկաւոր էր Հայաստանի դրան շէմքին հայ ժողովրդի բողոքը արտայայտել հէնց այդ գուրգուրած գազանին վրայ: Երկու կորիւնները թախանձանքով միայն կոմիտէից կարողացան տէնօրի գործը ստանձնել: Այլեւայլ պատճառներով կատարումը յետաձգեց մինչև 95 սեպտ. 20-ը: Նոյն օրը՝ չորեքշաբթի Բահրին զինւորական պատիւներով գնաց իտալական շոգենաւը, որի մեկնելուց քիչ առաջ Բահրին մի հեռագիր ստացաւ Պօլսից, նա գուրս եկաւ ասփը, իբր թէ շոգենաւին չէր հաւանել, բայց յետոյ պարզեց, որ սեպտ. 18-19-ին Պօլսում տեղի է ունեցել Պապը ալիի ցոյցը և կոտորածը: Երբեք Տրապիզոնի վալիին և հրամանատարին վրայ կատարեալ հաւաք չունենալով, հրամայել էր Բահրին հրահանգի սպասել... անշուշտ կոտորելու համար:

Բահրին, հրամանատար Ֆէրիզ փաշայի ու պարսկական թրքամուլ հիւպատոսի ընկերակցութեամբ և հետևորդներով վերադառնում էր շոգենաւից մեծ ճանապարհով. միջինը 1-1¹/₂ ժամ կար, Խաչիկ և ընկերը Զէյթին-լիքի փողոցից գուրս եկան և սկսան գնդակ տեղացնել Բահրիի վրայ, ամեն կերպ աշխատելով միւսներին չփնտսել. այդ հանգամանքը և տեղի շատ մօտիկութիւնը արգելք եղան ձեռնարկի կատարեալ յաջողութեան և Բահրին ազդրից, Ֆէրիզ փաշան սրունքից միայն վերա-որւեցան. վերաւորւածները սկսան տապալակիլ փողոցի մէջ և օգնութիւն պօռալ. իսկ հետևորդները հալածեցին տէնօրիստներին, որոնք փամփուշտները նորոգելով կարողացան կուելով փախչիլ և զապթիներին քթի տակից անյայտանալ: Յարձակումը այնքան յանդուգն և միանգամայն հայերի կողմից այնքան անյուսալի էր, որ անմիջապէս կարծիք կազմեցաւ թէ պաշտօնաթող զինւորների կողմից է, երբ յայտնի խաչագող Ֆէրիզ Խաչիկար-ճեան մի քանի զոչ. ձեռք բերելու և մասամբ վրէժ-խնդրութեան համար, վազեց մատնեց, որ հայեր են և այսինչ այնինչներ: Ամենախիստ խուզարկութիւններն ըս-

տէնօրիստների ազգականների բանտարկութիւնները ոչ մի հետեւեք չուին: Տղայոց սառնասրտութիւնը փրկած էր իրենց: Երկու օր յետոյ՝ սեպտ. 22-ին գիշեր կառավարական թելագորութեամբ թիւրք ամբօխը մօտ 6-8,000 հոգի զինւած գուրս եկաւ հայոց թաղերը կողոպտելու և սպանելու, բայց տէնօրի գործողութիւնը այնպիսի մի սարսափ էր ձգել նրա վրայ, որ մի երկու հայ տնից բեկովէր արձակելը բաւական եղաւ նրանց հեռացնելու: Նոյն իրիկունը կորիւնները տեղափոխուած էին առանձինն, երբ 20 հոգինոց մի թիւրք խումբ վրայ ինկաւ և ճանչնալով նրանց՝ սկսաւ հալածել. երկու պատանիները ամբողջ մի ժամ նրանց հետ ճակատ առ ճակատ յուսահատաբար կուելուց յետոյ, կուրուսին իրար. յ. Մ. մի տուն ապաստանեցաւ, իսկ Խաչիկ թաղից թաղ նրանց հետ գլուխ գնելով՝ ծանր կերպով վերաւորեց թափաճի օղլի Սապրի պէյ յայտնի սրիկային, որ 3 օր յետոյ արգէն գնաց Մահմէդի ճէննէթը: Թիւրքերը փախան և Խաչիկ բախտի բերմունքով գտաւ իր ընկերոջ: Այս երկու 17 տարեկան պատանիների հազար ու մի վտանգներից ազատելը, նոյնիսկ կոտորածի ժամանակ և նրանից յետոյ՝ եթէ մեծ մասամբ արգիւնք էր ժողովրդի համակրութեան, մասամբ էլ իրենց ցոյց տւած հեզութեան և քաջասրտութեան, այնպէս որ թիւրքերը սկսան առասպելական նշանակութիւն տալ նրանց անձնաւորութեան և զէնքերին. այնքան խաբեբայութեամբ սարքած կոտորածը արեւ վերջացրել էին. մնացած այր մարդիկ բանտին էին ձգւած: Մի ամիս անցել էր, բայց ամենախիտ թրքական թաղերում բնակող կառավարական յայտնի պաշտօնեաներն անգամ քարերով, կոճղերով ամրացնում էին իրենց տան դռները, յորովհետև երկու տղայքը դեռ ողջ էին: Մի կատի ցատկոտութեամբ, արգէն միւս օրը զրոյցի առարկայ էր դառնում թիւրք կանանց մէջ. «Թէ տղայք այս գիշեր մի տանիքից անցան». Գիշերային պահպանի աչքին թուում էր, թէ տղայք մօլլայի հազուստով այս ինչ տունը մտան: Խուզարկութիւնները, ոստիկանական շղթաները հաստատում էին բանդապուշանքներ միայն լինելը: Գաւառական մի քաղաքում, օր ցերեկով մեծ ճանապարհների վրայ փաշաների վրայ յարձակում գործելը և նոյնիսկ կոտորածներից յետոյ չձերբակալելը այնքան վերաւորական թւաց թիւրք կառավարութեան և ամբօխին, որ Բաթումի մէջ մահմէդական բէկերը, թիւրք հիւպատոսի թելագորութեամբ՝ յատուկ դաւադրութիւն էին սարքել տղայոց Ռուսաստանում գտնելու և տեղն ու տեղը սպաննելու: 97-ի յոյն-թըրքական պատերազմի ժամանակ, զրոյց տարածեց, որ «պէրպիրին» տղան (Խաչիկը) գերի բռնւած է Լարիսայում: Տրապիզոնի թիւրքերը, կարծես մի ծանր բեռից ազատւած, սկսան իրար աչքալուսանք տալ:

1897 թւից Խաչիկ և ընկերը Ռուսաստանի վրայով անցան Բուլղարիա-Պուրկազ՝ իրենց արհեստով մի կերպ ժամանակ անցկացնելու: Հայի աղտոտ եսը այս անգամ էլ հանգիստ չուաւ նրանց, ինչ որ ինչ-եաններ զրպարտեցին, մատնեցին նրանց (ոչ թէ իբր յայտնի տէնօրիստների, այլ իբր վտանգաւոր յիզափոխականների) և այն ժամանակաւ բուլղար կառավարութիւնը արտաքսեց նրանց: Միշտ կենդանի գործ պահանջելով՝ մինչև 1899 թւի աշունը Վովկասում լաիկ մեջիկ աշխատում էին թըռչունի նման մի օր կուշտ, երկու օր անօթի, բայց միշտ ոգևորւած, միշտ պարտաճանաչ և համեստ. նման չէին

նրանք այն տիպի հայրուհիներին կամ տեղափոխվածներին, որոնք միայն կուլի մէջ են յարգանք ներշնչում, իսկ նրանից դուրս փչանում են, դառնում մեծամիտ ու պահանջող:

1899 սեպտեմբերից Լափրովի նման սրիկայ ժանդարմական օֆիցերներ՝ «հայկական մի նոր դաւադրութիւն» բաց անելու և պաշտօնի մէջ բարձրանալու եռանդով՝ սկսան խելացնոր խուզարկութիւններ ու բանտարկութիւններ կատարել. բանտարկւածներից մի պատանի Պարոյր անունով, հիւանդացաւ ու մեռաւ: Ոստիկանութիւնը ամէն ջանք թափեց կորիւնները ձեռք բերելու, Օրհեստայում, Սեփաստօպօլում և նրանց բնակած տեղում ձերբակալութիւններ արաւ, բայց նրանք կարողացան հեռքերին կորսնցնել: Խաչիկ նոր հասել էր Բուլղարիա, երբ Պետոյի-Թաթուրի խումբը պատրաստում էր ճանապարհ ընկնելու Չանձրացած անգործ մնալուց՝ նա ինքնաբերաբար ու սիրով միացաւ նրանց և Ագրիանուպօլսի հրաշալի կուռում իրեն պէս համեստ ու քաջ Թաթուրների, Օննիկների կողքին զոհ բերեց կեանքը նրան Ոգուն, որը նրան հասարակ ժահկանցունների միջից առել բարձրացրել էր դէպի վեր, դէպի անմահութիւն...

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Թ Ի Ի Ր Բ Ի Ո Յ Ծ Ո Ւ Ր Զ Ը

ԱՐԱՐԻՒՆ — Երբ հա՛միսլամ ու թե՛ քրիստոնէական գոտիները, դանդաղանքները այնքան ժխտող կը հանեն աշխարհի մէջ, երբ խաւիֆան կուգէ համախառնութեան մոլորանշով սարսափահարել քաղաքակիրթ աշխարհը, Արաբիան, որու հպատակութենէ կախում ունի սուլթանի խալիֆայութիւնը՝ ապստամբած է:

Արաբիան մշտատեւ, թէեւ կարծաւոր ապստամբութեան դասական երկիրն է: Այդ երկիրը թիւրք գինւորներուն ինչպէս հաճինքնուն — գերեզմանը եղած է, ուր կերթան կուլի դիւրաբորոք ժողովրդի մը եւ հրեղէն, երբեմն վատառողջ կլիմայի մը դէմ. բայց Թիւրքիան, մանաւանդ Արդիւլ Համիդը, ինչ ալ ըլլայ, պարտաւոր է ամէն զոհողութիւն ընել Արաբիան Թիւրքիայէն չբաժնետու, որովհետեւ անոր կորուստը իր կրօնային հեղինակութեան մասն է միանգամայն:

Իսմաիլու-Մէքքէ երկաթուղին, ըստ ոմանց, «էն մեծ մտածումը» սուլթան Համիդի, խաղ մըն էր իսլամ աշխարհի համարումը շահելու համար. ատով, անորակելի Համիդը, որ խալիֆայութեան փաթտոցին հետ «Մեծ Մարդասպանի» կարմիր փաթտոցը այնքան շնորհալիօրէն կը վայելեցնէ, կուգէ ցոյց տալ թէ ինք միշտ քարեխնամ հայր մ'եղած է Մէքքէ գաղտը հաճինքնուն համար եւ միշտ կը մտածէ աշխարհի բոլոր մահմադականներուն հանգստութեան, երջանկութեան ու ապահովութեան մասին: Փոխանակ ծովային երկար, տաժանելի ծամբորդութեան, ուխտաւորները երեք օրէն Շամը շէրիֆէն, Քուպէի եւ մարգարէին գերեզմանին առջեւ պիտի ըլլան: Սիւրէյի հիւսնայունը (սրբազան կարաւան), որ կայսերական տարեկան ընծաները կը փոխադրէ Մէքքէի Մեծ Շէրիֆին համար, այլեւս յապաղումներ, վտանգներ չպիտի ունենայ:

Գրծնական է հրաման տալ Թիւրք կառավարութիւնը քաղաքական նպատակն է որ կուգէ իրագործել, այն է՝ ապստամբութեան պարագային շուտով զօրք եւ ռազմամթերք հասցնել Արաբիոյ սրտին վրայ եւ ջախջախել ամէն դիմադրութիւն:

Այդ խաբուսիկ ծննդարկը, Թիւրքերու աստուր ծգնամբն, օղագունդ մըն էր իսլամ աշխարհը ցնցելու, մտքերը խռաշափելու համար: Կեանք մը, որ սկսած է արեւստական դեղերով քաշքշիւ, եւ ծածկել սարսափելի իրականութիւնը արտաքին ծննդածութիւններու տակ: Այդ ս. գծին համար, որ պատիւ պիտի բերէր միւսիւման աշխարհին — Արաբիան, որ պատիւ տաններու փառքերը շատոնց մնացած եւ անդառնալիօրէն կորսած ըլլալով — մասնաւոր հրաւէր եղաւ աշխարհի ամէն բնեւ եւ շատ շուտեց ծայրագոյն ալեւելքէն մինչեւ արեւմուտք իսլամութիւնը

արծազանք տաւ այդ հրաւէրին եւ նւէրներ տեղացին Երուզ, ուր կը գտնուէր ս. Գործին համար կազմած կօմիսիօնը, Համիդի նախագահութեան տակ: Ապագան գուցէ ցցնէ թէ Համիդի եւ իր մեղսակիցներու այդ ծրագիրը, խաչագողութեան վիթխարի դաւադրութիւն մըն էր, իսլամական տգիտութիւնը կթելու եւ Երուզի աւազակներու զբաւնը խնդացնելու համար: Կատակերգութիւնը — որուն նոյնը ողբերգութիւնն է — դեռ կը շարունակուի. Արդիւլ Հիւսայի — սուլթան Համիդի կախարհը օրհնութեամբ եւ ներշնչումով աշխարհի ամէն կողմ մ'օլլաւ — ներքին, սօֆիստներ կերթան ս. Գործին համար պրօպագանդ ընելու եւ միանգամայն համախառնութեան մարտու... սիրով ցանկու համար:

Իսկ երկրին մէջ Թիւրքիոյ իսլամ եւ ոչ իսլամ քնակիչներէն կամաւոր եւ... չկամ նւիրատուութիւններու ժողովարարութիւն սկսած են ընել. որոշւած է դժբախտ պաշտօնականներու տարեկան մէլմէկ ամսականները վար դնել եւ հրաման ելած է նաեւ որ Գուրպան պայրամին մորթուած բոլոր ոչխարներու մորթիքը նւիրին Մէքքէի գծին շինութեան:

Աս տեսակ մուրացիկ միջոցներով շէր որ հուն պիտի ելլէր 1,700 քիլոմէթր երկայն երկաթուղիի հսկայ գիծ մը, որուն 40 քիլոմէթրը միայն շինւած է, ան ալ խախտու եւ վերիվերոյ կերպով, որովհետեւ այդ գծին վրայ կաշխատցնեն անօթի, տկար գինւորներ եւ կը հսկեն տանձաւոր թիւրք ճարտարագէտներ, այն սկզբունքով թէ սրբազան գիծը պէտք է միմիայն իսլամական նախածննդութիւն մը ըլլայ, եւ միմիայն... ապա տէստէ անցող ծնոքը աշխատին անոր վրայ:

Իսլամութեան մուլ ճակատագիրը վարել փառասիրողները որոնք մեծ փայլահարած մը ընել ուզեցին, այժմ զգալով որ Թիւրքերուն կերած ապուրը չէ այդպիսի գործի մը գուրդը կանգնել որուն համար երկու հարիւր միլիօն ֆրանք ծախք կը հաշուէր — գրեթէ օսմ. կայսրութեան տարեկան պիտոմէն — կը մտաբերեն եւրօպացիներուն, մանաւանդ գերմանական ընկերութեան մը յանձնել:

Թիւրք թերթերը չեն կարող ամենաշոյայլ եւ ամենաանմիջ ըստեք գտնել — թէեւ այդ մասին այնքան ճիշտ թիւրքերէն լի գուն — այդ երկաթուղիին առթիւ սուլթանին մ'արդասէր Դու կրօնասէր ոգին օրհնաբանելու համար, որ գիտէ ալլաքին եւ մարգարէին փառքը քարծրացնել:

Թիւրք լրագիրները եւ մանաւանդ շանձունդ Թահիր պէյը, իր անմոռելի ցեղի մը մարմնացած քիւլ հան պէյը իւր իւր եւ սրիկայութիւնն է — օր, ժամ, իրաւէ չեն փախցնել, յայտարարելու իսլամ ժողովուրդին, թէ ամբողջ աշխարհ կը հիանայ սուլթան Համիդի խելքին վրայ: Երբ աղ եղննազօրծ մակաբոյծները, որոնց անձնիւր իր մամուլին նոյնը պահելուած մէլմէկ շարագործներ են, երեկոյեան էգանք կը լսեն եւ կը հաշնեն իրենց շողորթութիւնները սուլթանին ուղղւած, չեն կրնար զլանալ իրենց իրենց հոմայեցի կայսեր ազնիւ խօսքը. «որս պարապ չանցուցին»:

Թիւրք թերթերուն նայելով, աշխարհք սուլթանի կոթիւ վրայ կը դառնայ. կարծէ չուտել չկամէ Պօլսոյ թերթերը խորդալ եւ բացակամշիւ Կիկերոնի հետ. Otiun cum dignitati

«Ազնիւ անգործութիւն»:

Երբ Թիւրք խմբագիրները համաշխարհային երազներ կ'ոտայնանեն, ապստամբութիւնը օրէ օր սպառնազին կերպարանք կըլստանայ Արաբիոյ մէջ: Թիւրքիան քարոյապէս ու նիւթապէս կաշուկը մնացած, սովալլուկ գայլ մը, անկարող է դէմ դնել իր երկրին մէջ արթնցող զայրոյթի փոթորիկներուն: Իր զօրքերը անօթի ծարաւ, բորիկ ու թշուառ են: Ահաւոր ճարձատիւնն է որ իր եղննալուր եւ եղերական վայնասունը լսելի կընէ երկրին ամէն մէկ կէտէն. անէծքն է որ կը ժայթքէ տկար ու անզօր թղթեր դէպէ գազան բէժիմը, վրէժխնդրութեան հուրն է որ կը վառէ արի սրտերը:

Արաբիան, այս րոպէս, ամբողջ Թիւրք կառավարութիւնը տազնապի եւ շղիտուկի մէջ դրած է: Կար ատեն մը, երբ արաբները կը փորձէին իրենց խեղճ հրացաններով ընել թուրքերը իրենց երկրէն, այնպէս որ իրենց յաճախակի ապստամբութիւնները կը վիժէին օսմանեան զօրքերու կատարելագործւած գէնուզօրքերուն դէմ: Այժմ, Արաբիան, զրեթէ մեծ մասով գինւած է նոր սիստէմի գէնքերով, զոր կը հայթայթեն հաբիւրաւոր վաճառականներ, Կարմիր ծովու ափին վրայ հաստատւած եւ որոնք իրենց յատուկ զործականքի միջոցով կուղարկեն մինչեւ Միջագետք եւ Տիգրանակերտի կողմերը: Թիւրքիան անզօր է Արաբիոյ անմայրածիր, վայրենի եւ խուլ ափերը պաշտպանելու մաքսանենգներուն դէմ. Կարմիր ծովուն մէջ ունեցած քանի մը յաճաւորականներ կեցած տեղերնին կը փոտին եւ այսօր ինքզինքը կը գտնէ սպառնազին արապ ժողովուրդին դէմ, որուն ատկութիւնը դէպի Թիւրքերը եւ ցեղային հպարտութիւնը որ ունեցած իր վաղանցուկ քայց մեծ պատմական դերը — չնկ հանդուրժեր

թաթար սերունդի մը լուծը կրել եւ շնո ուզեր թողուլ որ իսալիֆայի թիւնը խորթ սուլթաններու ձեռքը մտայ:

Թիւրքերու տիրապետութիւնը երբէք այսօրեան չափ վտանգաւոր չէր Արաբիոյ մէջ: Համիդ-է-Էլին իմամը Եւթմէնի մէջ օսմանեան զօրքերը պաշարած է Սանսի մէջ: Սուլթանը զինուոր դրկելու տեղ օգնութեան, կրօնական մ'իսիօնաբոլ թիւն մը ճամբայ հանած է որ երթան, ընծաներով համոզեն արաբները յանուն մարգարէին հնազանդ մնալ իսալիֆային:

Օրէ օր Համիդ-է-Էլին դրօշին տակ կուգան համախմբելու երջանիկ Արաբիան, Հիճազը, Ասիրը (Արաբիոյ Սասունը եւ կտրիճ մասը), Նոյնիսկ անոնք, որոնք դեռ քիչ շատ սուլթաններու իշխանութեան կուգէին հաւատարիմ մնալ: Եւթմէնի վալին Հիւսէյնի շեյքի փաշան ձեռք չիյնալու համար ծալուած Հուսէյնի մօտ ծովագնացայ նաւահանգիստը փախած է. իսկ Սանսի, որ նեղ կնքովով պաշարւած էր, եւ ուր կը գտնուէր Եօթմէնի թաւակի հրամանատարը մ'արէշալ Ապտուլլայի փաշան իր զօրքերով, լուր ելալ թէ անծնատուր եղած է արաբներուն: Ծովագնացի եւ Սանսիի մէջ բոլոր յարաբերութիւնները խզւած, հեռագիրները շնչւած են... Եւթմէնի, մանաւանդ Անգլիան, ուշի ուշով կը հետեւին այդ կարեւոր շարժումներուն եւ շատեր Անգլիոյ մատը կուգն Նշմարել անոր մէջ: Կրօնական պատգամաւորութիւնը որ արաբներուն ջոկքը հանդարտեցնելու կերթար, կէս ծամբան մնացած է եւ կըսպասէ նոր հրահանգի Պօլսէն, ուր Եւթմէնը իր գլուխը կորսնցուցած, չգիտեր ինչ ընէ:

Վահապիւնները, կեդրոնական Արաբիոյ հիւսնալի լեռնաշղթան, Նեճէտի թնակիչները, որոնք իսլամութեան քողոքակներն կը սեպելն եւ կատեն սիւնիները իբրեւ աւելորդապաշտ, նորէն Արաբիան աշխարհակալելու ծգտումներ կը ցցեն: 1815-էն իվեր, երբ Եգիպտոսի իպրահիմ փաշան անթիւ ժախորդութիւններէ վերջը հազիւ հազ ջախջախեց զանոնք եւ ետ մղեց Մէքքէն եւ անոնց Էմիրը Պօլիս դրկելով գլխատեցին, վահապիւնները խեղճ կեցած էին իրենց շարաշար պարտութենէն ետք: Կրօնապէս մոլեռանդ, եւ արաբական էն մարդը տիպարը կը կազմէն վահապիւնները եւ կը թնակին Արաբիոյ սրտին վրայ, ամենաբարեբեր, բարեխառն լեռնավայրի մը մէջ. ծիծաղկոտ մի՞նչ կողմի մը, անապատի ծովի մը մէջ գոր կ'աղօսեն վիթխարի վատ ինքերը (ցամաք գետեր) եւ որոն անհունութեան վրայէն սիւմուսնը մահւան սարսափը կը պտտցնէ:

Օսմանեան կառավարութիւնը յանկարծակիի եկած, հորիւր վաշտ զօրք հաւաքած ասդիէն անդիէն, ծամբայ հանած է դէպի Արաբիա, որոնք միջնեւ համիւն, գուցէ ապստամբութիւնը աւելի համամատական քայլեր առնէ:

Անաստիէն գացող թիւրք զինուորները, հաւանորէն չգիտմանս երկրի օթով կլիմային եւ վատառողջ թէ համ'անեքուսն (Արաբիոյ կիզիչ աւազուտ ծովագնացը) մէջ իրենց դիմաւորներ փոխ. ինչպէս Մուսնա վայրի հովտին մէջ համիւններուն գոհի ղեկարները: Հին մալստամբութիւններուն ատեն Եգիպտոսէն կերթային զօրքերը, որոնք վարժ էին շոգ կլիմային, բայց այժմ Եգիպտոսը այդ հլու դերը չի կատարեր սուլթանին հանդէպ:

Պօլսոյ մ'իւլէ գինն երբ արտասագին պիտի նային սլացիկ միջնաբերդներուն վրայէն, դէպի խըպէլէ, ուր մ'ապէլ յի իսալիֆայութիւնը կը հոգեւարի եւ ուր ապի գէմ գէմը չկըցաւ վերակենդանացնել իսլամութեան մարմինը:

Հաւատացեալներու հրամանատարը, իր վարդէ անկողինին մէջէն, ուր Ապրիլ Հիւլայի զառացանքները կը հեշտագուն գինքը, համախմբութեան տարտամ հեռապատկերի մէջ կը տեսնէ արդէն Մէքքէ-Մէտինէ նւիրական քաղաքներուն անհետացումը եւ կը նախագայ այն լեռի լեռի պատրանքը որ պիտի ծաշակէ իր քսանեւհինգ տարւայ ամուր, անբարոյական, աշխարհաւեր փատիշահութեան իբր արդիւնք:

Երջանիկ Արաբիան կուգէ թօթելու թիւրքերու լուծը, Մեծ Եւթմէն, որ կը նստի Թայֆա ուր Միտհատ փաշան խողխողեցաւ — կը ձգտի վերստանծնել նորէն իր օրինաւոր իսալիֆայական ժառանգութիւնը, զոր թիւրք սուլթանները անարժանաբար յափշտակած էին:

Քրիստոնեաները իրաւունք չունին չսիրելու տէրութիւն մը, ժողովուրդ մը, երբ այլացեղ միւսիւլման տարրերն իսկ ատելով կատեն եւ որոնց արաբները նախատօրէն ի պէն-է-Է-Պէլլա — շան — որդիներ անունը կուտան:

Օսմանեան պատմութեան անհրապոյր, արիւնթաթախ եւ սեւամաղձ էջերուն մէջ, Ավիսէնի, Ավեբօէսի, Էլֆարարիի ցեղին անողոք, բայց արդար քաջագանդութիւնը, գուցէ լաւագոյն անմահութիւնն է ցեղի մը եւ պետութեան մը համար, — իսլաւէլլա...

Ժ Ր Օ Ժ Ֆ Ա Վ Օ Ն

Ժընէվի արմատական կուսակցութեան պարագլուխը, որ միւնիոյն ժամանակ Շվեյցարիայի ամենափայլուն ու սիրւած քաղաքական գէպերից մէկն էր, մեռաւ. ամսոյս 17-ին 59 տարեկան հասակում:

Այդ մահը, որ ողբում է այսօր տմբողջ առաջագէմ Շվեյցարիան խոր ցաւ պատճառեց նաեւ «Դրօշակ»-ի խմբագրութեան: Հանգուցեալը յեղափոխական աշխարհայեցութեան ու տեմպերամենտի մարդ էր եւ — հրապարակական ճառերի ու մասնաւոր խօսակցութիւնների մէջ — քանիցս քաջալիրել է մեզ իր տաք, անկեղծ եւ ազդու խօսքով:

«Ես ձեզ հետ եմ, ձեր տրամագրութեան տակ եմ... տարաբարտարար անգոր են իմ համակրութիւնները», — այսպէս էր գրում նա տարիներ առաջ մեր խմբագրութեան: Իբրեւ ղեկավար Le Genevois թերթի, նա երբէք առիթը չէր փախցնում մեր դատը փոստաբանելու: Իբրեւ միւնիստր Ժընէվի կանտոնում եւ իբրեւ անդամ Շվեյցարական պարլամենտի՝ նա երբէք չէր զանում իր աջակցութիւնը հայերին «Դրօշակ» նա իր հովանաւորութեան տակ էր առել եւ զգալի թոպէներում պաշտպան էր կանգնում նրան անյայտ դաւերի դէմ: Երբ 1896-ի աշնան Օսմանեան բանկը գրաւող մեր ընկերները Փրանսիայից արտաքսւած՝ գալիս էին Ժընէվ, Իւրնի պաշտօնական շրջաններում խլտում էր ընկել եւ արդէն լուր էր պտտում, թէ Շվեյցարական կառավարութիւնը եւ չպիտի հանգուրժէր իր հողի վրայ «հայ անիշխանականներին», որոնք ուռմբերով էին խօսել Կ. Պօլսում: Փալսնի միջամտութիւնը հանգրտացրեց մեզ. «Այո, անշուշտ, բուրժուազական ֆիլիստերների համար ոճրագործներ են հայ յեղափոխականները. բայց սուլթանի անարգ ու ժիւղի դէմ ըմբոստացող անիշխանական զենքերով միայն կարող է կուելը հանգիստ եղէք»: Այսպէս պատասխանեց Փալսն մեր դիմումին:

Հայկական դատը չունէր Շվեյցարիայում աւելի անկեղծ եւ պերճախօս բարեկամ: Մինչեւիկ մահամերձ հիւանդ լինելով՝ Փալսն, սրանից երեք ամիս առաջ, սիրով համաձայնեց նախագահել Ե. Հ. Ուսան. Միութեան կազմակերպած՝ Պրեսանսէի յայտնի կոնֆերանսին՝ Վիկտորիա Հալլում: Զգայուն ու կարեկցող սիրտ — ահա Փալսնի կարգինալ առաքելութիւններից մինը: Համակրելի ժողովրդական տրիբունի եւ մեր անկեղծ ու մտերիմ բարեկամ յիշատակը անջնջելի կը մնայ մեր սրտերում:

«Դրօշակ» խմբագրութիւնը, ինչպէս նաեւ Ե. Հ. Ուսան. Միութիւնը պսակ էին դրել հանգուցեալի դադարի վրայ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԲԻՒՐՈՆ ստացած է՝

ԲԵՐԼԻՆԻ «ՄՈՒԼԿԻԷ» կօմիտէից 90 մարկ (110 ֆր. 80 ս.), ՆԱՐԼՆԳՈՒՆԳԻ հայկական ընկերութիւնից Մ. Դաւիթի միջոցով 16 ֆր. 70 ս., Ն. Պօղոսից 5 ֆր., ԴԱՐՄԵՏԱՏԻ ուսանողական խմբերից (սոցալ թշուր եւ մէկ թիւրք) 200 ֆրանք,

ՓՈԶԵՆՆԻՑ (Ռուսմանիա) Ստեփան Բալակճեանի միջոցով Միս-
րան խմբից 25 ֆր., ԲԷՐՆԷ՝ գիւղացւորացի (Եվէյցարիա) մի
համակրող տիկնոջից 5 ֆր., ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ կիստօից 50 ֆր.,
տիկ. Ա.-ից 10 եւ 18 ֆրանք

ԱՄԵՐԻԿԱՆ վէստ-ֆոլդընէն՝ Անդրանիկի եւ իր ընկերներու
համար՝ Խ. Շաքարճեան 6 դօլար, վ. Մամիկոնեան 5, Մ. Զա-
րարեան 5, Է. Մորճիկեան 2, Ուն 2: Դուստր 20 դօլ. (100 ֆր.):

ՆԻՇՆԷՆ (Սերբիա)՝ Համակիր մը 23 տիկնար, եղբայրք 10.
Օ. Մ. Թ. 20 տ., Է. Յ. 10 տ., Գուսմ 10 տ., տօք. Մ. Ն. Գ.
5 տ., վանապետ 20 ֆր., Գիւղացւոր 20 ֆր.: Դուստր 100 ֆր.:
Ընդհանուր գումար 650 ֆրանք 50 սանթիմ:

ՎՐԻՊԱՆ. — Կորօզակ թիւ 3 ԱՐԵՆԻՄՏԵՆ ԲԻՒՐՈՒ ստացած
գումարներին մէջ սխալմամբ մտած է՝ ԲԵՐՆԷՆ Ա. Տ. Մ.-ից 22
ֆր. 15 սանթ. այս գումարը յանձնւած է Ե. Է. Ո. Միլոճեան:

ՆԱԽԱՅԱՆԳՍՏԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Քախտ՝ խմբ. Ռաշօից 8 ուրբի, ՍՊԱՐԱՊԵՏԻ Կորօզակ
խմբից Գիօրիկ 1. 45, Ս. Շահում 1. 45, Մ. Նուբար 1, Աղասի
1, Տ. Աւետիք 1. 45, Ս. Զօրավար 1. 45, Բ. Զօրավար 1. 45,
Որստր 1, Էրեռք 1. 45, Զինուոր 0. 25, Շիրվան 3. 10, Թէյրան
2. 40, Սմբատ 2. 40, Ե.-ի միջոցաւ Շիրակ 0. 60, Ե.-ի միջոցաւ
Փերիկ 0. 40, Ռափայել 0. 20, Բ.-ի միջոցաւ 0. 40, Տ. Աւետիքի
միջոցաւ 0. 50, Ալեքսան 0. 15, Սեպուհ լոպից 46. 50, Կաշաձեան
խմբ. 10, Կիկար՝ խմբ. 20, Կարապետ՝ խմբ. 15, Կարա-
պետ՝ խմբ. 4, քանտարկեանի մը համար 5: Դուստր 130 ուրբի
68 կօպէկ:

ԾՈՎԱՓԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Փրանտ 108 դր2: Պատանխաց՝ խմբ. 43 դր2:

ՎԻՃԱՊԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

Հայրենիք 10, 15, 15, 20 եւ 10 դահեկան, Հոսանք 5, Գալուս
5: Դուստր 80 դահեկան:

ԱՐԺԻԻ ԿՈՄԻՏԷՆ՝

Պալատ՝ խմբ. 34 դահեկան, տիկ. Արարսիէ 5, տիկ. Ար-
շալոյս 5, երեք ընկերուհիներ 57, Օմանդակ՝ խմբ. 618, Սար-
սափ՝ խմբ. 103: Դուստր 922 դահեկան:

ՈՍԿԱՆԱՊՍՏԻ ԿՈՄԻՏԷՆ՝

ՋՐԱԲԵՐԴԻ ԿՈՄԻՏԷՆ. —
N° N° 101 Զբոսիչի հարսանիքից Տր-քի ձեռամբ 15 ուրբի,
102 Շիկահերի Բողոք՝ խմբից 12. 50 ռ., 103 Զբոսիչի Մ. եւ Ա.
Նշանադրութիւնից 10. 30 ռ., 104 Զբոսիչի Շարժական խմբից
6. 50 ռ., 105 Սարգսի ծաղիկ խմբից 34. 84 ռ., 106 Առուակի
Ուրսուտ խմբից 10 ռ., 107 Զբոսիչի Յոյս խմբից 3 ռ., 108
Զբոսիչի Յ. Պ. Ի. 8. եւ Մ. Գ. Ի. 8. եւ Յ. Ե.-ի տօներից 7 ռ.,
109 Զբոսիչի Կ. Փ. Ի. եւ Մ. Մ. Մ.-ի տօներից 5. 50 ռ.,
110 Շիկահերից Խ.-ի ձեռամբ 80 ռ., 111 Ժաւաղանից պսակ.
առթիւ Զբոսիչ 25 ռ., 112 Բլուր գ-ից 11. 75 ռ., 113 Վտակ
գ-ից Մեղու խմբից 16 ռ., 114 Նախընթաց գ-ից 3 ռ., 115
Զբոսիչի Շահապիւան խմբից 5 ռ., 116 Կղզի գ-ի Գարուն
խմբից 9 ռ., 117 Կղզի գ-ի Անի խմբից 1 ռ., 118 Արշալոյսի
գ-ից 2. 45 ռ., 119 Պրակ գ-ից 42. 58 ռ., 120 Տղմուտի Զաւա-
գործ խմբից 5 ռ., 121 Տղմուտի Նեղուած խմբ. 3 ռ., 122 Ժա-
նաստանի տեղ. կօմ-ից 28 ռ., 123 Զար գ-ի Արամ խմբ. 5. 10
ն., 124 Տղմուտ գ-ի Անուշ խմբ. 10 ռ., 125 Սարգսի ծաղիկ
խմբ. 50 ռ., 126 Առուակ գ-ից 5. 65 ռ., 127 Նորարքի տե-
ղացիներէ 11. 99 ռ., 128 Նորարքի գաղթ-ից 2. 90 ռ., 129
Դ-ճիկ Անուրեան խմբ. 7. 25 ռ., 130 Զբոսիչի Սիւնեան խմբ.
3. 85 ռ., 131 Եփրատ գ-ի Եփրատ խմբ. 20 ռ., 132 Գիկերոն
գ-ից 8. 45, 133 Մ. եւ Ա. պսակադր. Զբոսիչ 11. 65 ռ., 134
Օղածորից 20 ռ., 135 Ժաղկածորից 14. 85 ռ., 136 Ն.-ի մի ուն
պահից 24 ռ., 137 Արամ գ-ի տեղ. կօմ-ից 30 ռ., 138 Զա-
րածոր տեղ. կօմ-ից 20 ռ., 139 Սպիտակ-Դօշի տեղ. կօմ-ից 14. 85
ն., 140 Զբոսիչի Յոյս խմբ. 3 ռ., 141 Գետածոր գ-ից 2. 80
ն., 142 Հիւսիս գ-ից 10 ռ.: Դուստր 612 ուրբի 76 կօպէկ:
Մինչեւ 5 մարտ 1902:

N° N° 143 Լեռնավայրից 7 ուրբի, 144 Անուակ գ-ից 5. 08
ն., 145 Զբոսիչ գ-ից 10 ռ., 146 Լոկի գ-ի Պահլիկ խմբ. 15 ռ.,
147 Պրակի գինուրակ. 15. 20 ռ., 148 Բլուր գ-ից 9 ռ., 149
Շաւարշեան խմբ. 4 ռ., 150 Ժամբորդ գ-ից 21. 55 ռ.: Դուստր
86 ուրբի 78 կօպէկ:
N° 7 տետր. — 301 Աւարայրի խմբ. 12. 50 ուրբի, 302 Զբա-
սիչի երեկոյթից 62. 42 ռ., 303 Տ-ընց Նուէր 14 ռ., 304
Տղմուտի Աղանի խմբ. 9 ռ., 305 Աղբանի-Կարդոսից 5. 32 ռ.,
306 Ակունքի-Դուստրից 19. 70 ռ., 307 Մամուլանի Ամպարից
4. 55 ռ., 308 Պարտիզանի Տիւնից 70. 43 ռ., 309 Արեգի

կօմ-ից 17. 58 ռ., 310 Փայլուն գ-ից 5 ռ., 311 Մանուկ գ-ից
2 ռ., 312 Կիկիկիայի Զէյթուն խմբ. 2 ռ., 313 Կարմրակի Բազէ
խմբ. 1. 50 ռ., 314 Զիւճորի կօմ-ից 7. 75 ռ., 315 Արմաւիրի
Աղիւծ խմբ. 4 ռ., 316 Նախագործի Արծիւ խմբ. 37. 50 ռ., 317
Նախագործի Ներկ-ից 70. 10 ռ., 318 Եփրատի կօմ-ից 9 ռ., 319
Եփրատի կօմ-ից 18. 60 ռ.: Դուստր 872 ուրբի 95 կօպէկ:

Ընդհանուր գումար 1072 ուրբի 49 կօպէկ:
1901 թ. դեկտեմբերին՝ Խաչըռա լճից 10 ուրբի, Հայսյժ
խմբ. 10, Սկանակից 80, Մեքենա խմբ. 10, Ոսկանապատից 200,
1902 թ. յունւարին՝ Երեւ-ից 500, Մեծ քաղաք. հանգու-
նակ. յունւ. 5-ին 415. 55, Մեծ քաղաք. երեկոյթից 77, փետրե-
ւարին՝ Ոսկանապատից 300, Խանի ձեռամբ 6. 35, Ալալաթ
խմբից (Ա. Զնիի ԺԵՐՈՒՆՈՒ տասնեակից) Անյայտ, Ազնիւ Ժե-
րոնի, Շղթայրասէր, Բոռ-օլի, Նախախալ, Զորամէկ, Համաձայն,
Ասպար, Սուր, Երկաթ, Զաւ Բարեգործ, Նետիշ, Տոգատ 13,
4 հատ Զարիքի զբք. համար 1, Մարտին՝ Ախց-ից 2. եւ Գ.-ի
միջոցով 81, Ախց-ից Դուստրի ձեռքով հանգանակած 188, Զա-
րից Սերգէի միջոցով 257, Տարծի Աղիւծ խմբից՝ վատված,
Դժոխք, Փիրդուսի, Կարիճ, Կայծակ, Փարամազ, Թուր, Ագրայէլ
Ժարտար, Նետանիշ, Մարմանդ գետ, Տէրտէրեան, Ուժեղ, Սէրգօ,
Երուանդ, Միլ Ռազմիր 16, Բէլէան դաշնակից եռանդ խմբից
10, Զրաքերից 300, 14 հատ Զարիքի բրօշ. համար 5. 50, Ոս-
կանապատից 700, Շիրվանի խմբ. 3, Ոսկանապատից 250: Դու-
ստր 3432 ուրբի 40 կօպէկ:

1892 թ. մարտ եւ ապրիլ ամիսներին՝ Աւարայր խմբ. 20
ուրբի, Սիւնիք խմբ. 15. 60, Անդրանիկ խմբ. 6, Նապատակ խմբ.
5, Մազնիս խմբ. 40, Մոլորակներից 100, Բողոքացի Ա.-ից 9,
Վազգէն խմբ. 30, Առուակ խմբ. 42, Պետոս-ի երեկոյթից 380,
ստացւած վիճակահարից 891, վազր խմբ. 16. 15, Յունիս խմբ.
10. 60, Շէրօ Զաթից 11. 60, Խայթ եւ Երկունք խմբ. 30. 40,
վիճակահարից Նէր 30, հին ապառիկ Կ. եւ Ա.-ից 13, զրքերից
Ե.-մ վաճառած 18. 50, Եկեղեցւոց 150: Դուստր 2285 ռ. 47 կօպէկ:

Լ. Պ. ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԷՆ՝

ՈՍԿԱՆԱՊՍՏԻ կեդր. կօմիտէն՝ ԱծիւնԱն-Բէն 297 դահեկան,
Արաբօ՝ խմբի հետեւեալ անդամներէ (յունւ. փետր. մարտ.
ապրիլ) Արարատ 25, Զինուոր-Հրացան, Արեւ, Աստղ, Հակ. 33-ական,
Վեցհարածեանէ 33, Կամովին 890, Թուրք՝ իբր կանխավճար
4,450, Անկեղծ հայրենասէր 17,800: Դուստր 23,627 դահեկան:

ՎՐԻՊԱՆ. — Կորօզակի N° 4 Լ. Պ. կետր. կօմիտէի ստաց-
ւածներին մէջ մոռցւած էր՝ Գոյքանէրու 890 դահեկան:

ՐՈՒՄԱՆԻԱ՝

ԴԱՆՈՒՅԱ Ենթակօմիտէն ստացած է՝ ՍՈՒՆԻԱՅԻ համակրող-
ներէ՝ Վր. Պոլ. 15 ֆրանք, Յով. Յարութիւն 10, Համբ. Աւե-
տիսեան, Թ. Բարսեղեան, Պետ. Առագելեան, Սիւտ. Յովհան-
նէսեան, Յակ. Կարապետեան, Սր. Արրահամեան, Խոջ. Սար-
գիսեան, Մկ. Իկիթեան, Յովհ. Դեղբեան. Մամ. Համբարձում.,
Սարգ. Արթիւնեան, Մր. Յարթիւնեան, Գր. Յովհաննէսեան, Մկ.
Յարթ., Մրգ. Մէֆէրեան, Մ. Թէրգեան, Յակ. Գրիգորեան, Խոջ.
Յարութեան, Գր. Մանուկեան, Մր. Գրիգորեան, Խո. Համբար-
ձումեան, Պոլ. Մարտիրոսեան, Ար. Հազարեան, Մր. Վարդա-
նեան 5-ական ֆրանք: Դուստր 160 ֆրանք:

ՓԱՐԻՋԻ ԿՈՄԻՏԷՆ՝

Պ-ի ուսանողներից (250 ուրբի) 593 ֆրանք:

ՂԱՐԻՐ

Ա. Զ. Ս. ՈՒԹԵԱՆ. ԶԱՆԱՊԱՐԶԻՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՐԻԻ

Գինն է 60 սանտիմ, ճանապարհածախսով 70 ս.:

Լ. ՈՅՈՍԵՆՈՒ

ԱՄՐՈՒԱՅԻՆ ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ

(ԱՐՏՈՏՊԱԾ «ԴՐՕՇԱԿ»-ԻՑ)

Գինն է 50 ս., ճանապարհածախսով 60 ս. Գինը՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)